


25.338

Լ. ՎԱԼԼԵՐ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ՏԵԽՈՒՍՈՒՑՄԱՆ ՈԺԱՆԴԱԿ ԶԵՌՆԱՐԿ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յերկրաբդ, արդված հրատարակություն



332.2
4-15

ՀՐԱՅՐԱՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԾԽԵՆՆԵՐԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ՇԵՎ ՊԵՏՎԱՐԻ ՀԱՅԿ. ԽՍՀ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939 թ.

15 JAN 2010

Լ. ՎԱԼԼԵՐ

332.2

46-15

W

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՃԱՆԴԱԿ ԶԵՆԱՐԿ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ
ԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յերկրորդ, ուղղված հրատարակություն

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հրատարակելով Վալլերի «Խնայողական գործը» տեխնո-
սոլոգիան ձեռնարկը, հարկ ե համարվում հայտնել դասատուներին,
ուսանողներին, խնայարարների բոլոր աշխատողներին և
մյուս ընթերցողներին, վոր ԽՍՀՄ-ի Ժողովրդական տնտեսու-
թյան բոլոր ճյուղերի և աշխատավորների նյութական-կուլտու-
րական մակարդակի վերաբերյալ այս գրքի մեջ առաջ բերված
բոլոր թվերը ներկայիս նկատմամբ հնացել են արդեն և այլևս
չեն համապատասխանում իրականության: Թվերը և պլանները
ճշտելու համար անհրաժեշտ ե հիմնվել ԽՍՀՄ-ի Ժողովրդական
տնտեսության զարգացման յերրորդ հնգամյա պանի մասին Համ
Կ(բ)Կ 18-րդ Համագումարում ընկ. Մոլոտովի կողմից արված
դեկլոցման մեջ առաջ բերված տվյալների վրա:

8/IV 1939 թ.

Յերեան



3284
39

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ԴԵՐԸ

Սոցիալիստական սխտեմն անբա-
ժանորեն իշխում ե խորհրդային
յերկրի ամբողջ Ժողովրդական տըն-
տեսության մեջ: Դա իր վառ ար-
տահայտությունն ե գտել ԽՍՀՄ-ի
հիմնական որենքի—Ստալինյան Մահ-
մանագրության մեջ:

Հոկայական չափով աճել ե մեր
սոցիալիստական արդյունաբերու-
թյունը: Նա արդեն գրավել ե առա-
ջին տեղը Յեվրոպայում և յերկրորդ
տեղն աշխարհում: ԽՍՀՄ-ի արդյու-
նաբերության համախառն արտա-
դրանքը միայն 1938 թ. աճելու յե
1937 թվի գիմաց 17 տոկոսով և հա-
նելու յե (1926—1927 թ. գներով)
110 միլիարդ ուրբլու:

Գյուղատնտեսության մեջ ստեղծ-
վել ե «աշխարհում ամենախոշոր մե-
քենայացված, նոր տեխնիկայով գին-
ված արտադրություն՝ վորպես կու-
տնտեսությունների և խորհրդային տն-
տեսությունների համապարփակ սխտեմ»
(ՍՏԱԼԻՆ)*): Մեր յերկիրը 1937
թվին ընդհուպ մոտեցավ ընկեր
ՍՏԱԼԻՆԻ կողմից զբված խնդրի
լուծմանը—արտադրել տարեկան 7-8
միլիարդ փուխ հացահատիկ: Դաշ-
տերի բերքատվությունը և անասնա-
բուծության մթերատվությունը
բարձրացնելու հետևանքով՝ գյուղա-
տնտեսության արտադրանքը 1938
թ. աճելու յե 14 տոկոսով՝ 1937 թ.
համեմատությամբ:

*) Զեկուցում Սահմանադրության Նա-
խագծի մասին—Կուսհրատ, 1937 թ., էջ 10:

Հայրերեն ծավալվել ե խորհրդա-
յին առևտուրը: Պետական և կոո-
պերատիվ հաստիվաճառ առևտրի շըր-
ջանառությունները 1938 թվականին
հասնելու յեն 140,5 միլիարդ ուրբ-
լու՝ 1932 թվականին յեղած 40,3
միլիարդ ուրբլու գիմաց (այսինքն՝
1932 թ. համեմատությամբ աճելու
յեն յերեք և կես անգամ):

Սոցիալիստական շինարարության
խոշորագույն հաջողություններն ա-
պահովեցին աշխատավորների նյու-
թական բարեկեցության և կուլտու-
րական մակարդակի բուռն վերելքը:
Տարեցտարի աճում են բանվորների
և ծառայողների աշխատավարձի ֆոն
դերը և կուլտնտեսականների յեկա-
մուտները, իջեցվում են ապրանքների
գները և հաստատորեն ամրանում ե
խորհրդային ուրբլին: 1936 թվակա-
նին արդյունաբերական բանվորի աշ-
խատավարձը ԽՍՀՄ-ում 1929 թվա-
կանի համեմատությամբ ավելացավ
2,9 անգամ, մինչդեռ, հենց այդ
նույն ժամանակաշրջանում, բանվոր-
ների աշխատավարձը Գերմանիայում
նվազեց 21 տոկոսով, Իտալիայում 18
տոկոսով, Ճապոնիայում 12 տոկո-
սով: 1937 թվականին աշխատավարձի
ընդհանուր ֆոնդը ԽՍՀՄ-ում 1932
թվականին յեղած 32 միլիարդ ուրբ-
լուց աճեց մինչև 81 միլիարդ ուրբ-
լու: 1938 թվականին նա հասնելու
յե մոտավորապես 94 միլիարդ ուրբ-
լու:

«Յեթե անցյալում, մի յերեք տարի
առաջ, աշխորին տալիս էին մեկա-

կան, յերկուսական կիրովորամ հացա-
հատիկ, ապա աշխատ հացահատիկա-
յին ռազոններում կոլտնտեսական-
ներին մեծամասնութիւնն սկսել և
աշխորին ստանալ հնգից մինչև տաս-
նյերկու կիրովորամ, իսկ նրանցից
չատերը՝ աշխորին մինչև քսան կիր-
ովորամ, շխտելով արդեն այլ միջեր-
ներ տալու և դրամական յեկամու-
ներ ստանալու մասին: Յերեսն յե-
կան միլիոնավոր կոլտնտեսային տըն
տեսութիւններ, վորոնք մեկ տարվա
ընթացքում ստացել են 500-ից
մինչև 1500 փութ հացահատիկ
հացահատիկային ռազոններում, և
վորոնք ստացել են տասնյակ
հազարավոր ուղիներին տարե-
կան յեկամուտ՝ բամբակի, ձակըն-
դեղի, վուշի, անասնաբուծական,
գինեգործական, ցիտրուսային, պրո-
դա-բանջարաբուծական ռազոննե-
րում»: («Համամիութենական Կո-
մունիստական (բոլշևիկներին) Կու-
սակցութեան պատմութիւն»): Հա-
մառոտ դասընթաց ՀամԿ(բ)Կ
ԿԿ-ի հանձնաժողովի խմբագրու-
թյամբ, Գլուխ 12, էջ 325):

Աճող ստախանովական շարժումն
աշխատանքի արտադրողականու-
թիւնը հասցնում և հակադական
բարձրութեան և հետագա նախա-
դրային և ստեղծում լայն մաս-
սաների ունեւորութեան աճման հա-
մար:

ՈՍՀՄ-ի աշխատավորներին լայն
մասսաների ունեւորութեան աճումը
բացառիկ բարեհաջող պայմաններ
ստեղծեց ժողովրդական խնայողու-
թիւնների ուժեղ զարգացման հա-
մար: Խնայողութիւններ են գոյա-
նում բազմաթիւ միլիոնավոր բան-
վորների, գյուղացիների, ծառայո-
ղների մոտ: Այդ խնայողութիւն-
ները զգալի մասը տրվում և ի պահ
պետական աշխատավորական խնայ-
ողական դրամարկներին:

ՈՍՀՄ-ի աշխատավորը հավատա-
ցած և վաղվա որվան: Մեր յերկիրը
չգիտե, գործազրկութիւն, — բոլոր

բաղադրարկներին՝ անկախ իրենց սե-
ռից, ցեղից, ազգութիւնից, ապա-
հովում և աշխատանքի իրավունք,
հանդատյան իրավունք, ծերութեան
ժամանակ, նաև հիվանդութեան և
աշխատունակութիւնը կորցնելու
դեպքերում նյութապես ապահովելու
իրավունք, կրթութեան իրավունք:

Բանվորների և ծառայողների պե-
տական ապահովագրութեան, կեն-
ցաղի և կուլտուրական կարիքների
բարելավման, սանատորիաների,
կուրորտների, հանգստյան տների և
բժշկական ոգնութեան համար արված
ծախսերը միմիայն 1937 թ. կազմում
էին մոտ 10 միլիարդ ուրբլի:

Հապա ել ինչ նպատակներով են
Խորհրդային Միութիւնում խնայում
իրենց աշխատավորական դրամները
բանվորները, գյուղացիները, ինտելի-
դենցիան:

Խնայողութիւնները մեր յերկրի
աշխատավորները սովորաբար անում
են կուլտուր-կենցաղային բնույթ ու-
նեցող դանադան ծախսերի համար՝
արժեքավոր իրեր գնելու, ձանա-
պարհորդութիւնների և այլնի հա-
մար: Ապրանքաշրջանառութեան լայն
ծավալումը լրացուցիչ խթաններ
ստեղծեց խնայողութիւնների աճի
համար:

Խնայողութիւնները ՈՍՀՄ-ում
հանդիսանում են իսկական ժողովր-
դական խնայողութեան: Խոր-
հրդային խնայողական դրամարկը
ներում կատարվող ավանդների գու-
մարներն ամբողջովին պատկանում են
աշխատավորներին:

Դրան հակառակ, կապիտալիստա-
կան յերկրների խնայողական դրա-
մարկներում պահվող ավանդների
գումարի հիմնական մասը պատկա-
նում և վաճառականներին, կուլակ-
ներին, հողէտրականութեանը, չինով-
նիկութեանը և այլն: Այնտեղ աշխա-
տավորներին պատկանում և միմիայն
ավանդների ընդհանուր գումարի
փոքրիկ մասը:

Աշխատավորների հակադական մե-
ծամասնութիւնը կապիտալիզմի յեր-
կրներում ընդհանրապես հնարա-
վորութեան չունի խնայողութիւն
անելու: Այն նույն աշխատավոր-
ները, վորոնք ավանդատուներ են
հանդիսանում՝ գրկվելով իրենց
ամենամանհրաժեշտ բաներից, աշխա-
տում են գոնե մի փոքր միջոցներ
հավաքել «սե որվա համար»:

Խորհրդային խնայողական դրա-
մարկները նպատում են աշխատա-
վորներին կազմակերպելու իրենց
խնայողութիւնները և այդ խնայ-
ողութիւնները տալիս են սոցիալի-
ստական շինարարութեան Ֆինանսա-
վորման գործին: Ներգրավված
ավանդների ամբողջ գումարը (բացի
այն փոքր հարաբերական մասից, վո-
րը նշանակվում և ավանդատուների
ընթացիկ պահանջները բարելավելու
համար) խնայողական դրամարկը-
ները դնում են պետական փոխառու-
թիւնների մեջ: Խնայողական դրա-
մարկները ապա միջոցները տեղա-
վորելու համար գոյութիւն ունի
հատուկ պետական փոխառութիւն:
Այդ փոխառութիւնից ստացվող
յեկամուտի հաշվին խնայողական
դրամարկները սուկոսներ են վճա-
րում ավանդատուներին և ծածկում
են ավանդատուների սպասարկման
համար արված իրենց ծախսերը:

1938 թվականի կեսերին խնայողա-
կան դրամարկները հանդիսանում
էին պետական փոխառութիւնները
պահողներ հինգ միլիարդ վեցհարյուր
միլիոն ուրբլուց ավելի ընդհանուր
գումարով:

Ներգրավված միջոցները դնելով
պետական փոխառութիւնների մեջ,
խնայողական դրամարկներն այդ
միջոցները դրանով իսկ հանձնում են
պետական բյուջէին: Աշխատավոր-
ների խնայողութիւններն այդ ձանա-
պահով ոգտագործվում են սոցիա-
լիստական շինարարութեան գործի
համար, աշխատավորների տնտեսա-
կան և կուլտուրական կարիքների

Ֆինանսավորման համար, խորհրդա-
յին յերկրի պաշտպանութեան ամրա-
պնդման համար: Այդպիսով՝
խնայողական դրամարկները մաս-
նակցում են Լենինի և Ստալինի կող-
մից դրված խնդիրներն իրականա-
ցնելու գործում՝ ամենավոր խնայո-
ղութիւնն անդամ պահպանել մեր
խոշոր մեքենայական ինդուստրիայի
զարգացման համար, ելեկտրո-
ֆիկացիայի զարգացման համար:

Ազատ միջոցները խնայողական
դրամարկներին կողմից պետական
բյուջէին հանձնելը, այդ միջոցները
արտադրական նպատակների համար
ոգտագործելն ամբողջովին համա-
պատասխանում և աշխատավոր մաս-
սաների շահերին:

Բոլորովին այդ ուղղութիւն են
ստանում կապիտալիստական յերկր-
ների խնայողական դրամարկների
կողմից ներգրավվող միջոցները:
Այնտեղ այդ միջոցներն ոգտագործ-
վում են աշխատավորների շահա-
գործումը լայնացնելու և կապիտա-
լիստների տիրող դասակարգի իշ-
խանութիւնն ամրապնդելու համար:

Փաշտական Գերմանիայի որի-
նակից առանձնապես պարզ ու փոքր
և յերեսում խնայողական դրամարկը-
ների այդ դերը: Գերմանիայում
խնայողական դրամարկներն ոգտա-
գործվում են Փաշտական գիւտա-
տուրան ամրապնդելու համար և վոր
պես ոտար հողեր գալթելու և նոր
համաշխարհային պատերազմ նախա-
պատրաստելու համար միջոցներ
ստանալու աղբյուրներից մեկը:

Խորհրդային յերկրի տնտեսական
հզորութիւնն ու պաշտպանութիւնը
հետագայում ամրապնդելու, աշխա-
տավորների նյութական բարեկեցու-
թիւնն ու կուլտուրան հետագայում
բարձրացնելու համար տրվող ծախ-
սերի մեջ իրենց խնայողութիւն-
ներով մասնակցելու հնարավորու-
թիւնը հանդիսանում և այն հիմնա-
կան մոմենտներից մեկը, վորոնց
համար ավանդատուները մեղ մոտ

իրենց խնայողությունները մտցնում են խնայողական գրամարկդները:

Յուրաքանչյուր աշխատավոր զիտե հուլյան, վար ցանկացած ժամանակ նա կարող է ազատ կերպով ողտա- գործել իր խնայողություններն իր անձնական հաշիվողությամբ: Քաղաքացիները խնայողությունների անձնական սեփականության իրավունք- ները որենքով պահպանում են իր ար- տասայտուցությունն է դրանք 10 ՄՀՄ հիմնական որենքի: Ստալինյան Սահ- մանագրության 10-րդ հոդվածում՝ «Քաղաքացիների անձնական սեփա-

կանության իրավունքը նրանց աշխա- տավորական յեկամությունների ու խնայողությունների նկատմամբ, բնակելի տան և անային ութանգակ տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առօրյա գործառնու- թյան առարկաների նկատմամբ, անձնական սպառման ու հարմարու- թյան առարկաների նկատմամբ, ինչ- պես նաև քաղաքացիները անձնական սեփականությունը ժառանգելու իրա- վունքը պահպանվում են որենքով»:

2. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Հանրապետության սոցիալիստական հեղափոխությունից հետո, մինչև հե- ղափոխական Ռուսաստանում՝ զործող խնայողական գրամարկդները պահ- պանում էին իրենց գոյությունը: Խորհրդային Կառավարությունը խո- նայողական գրամարկդների ավան- դատություններն իրավունք վերապահեց ազատ կերպով տնորինելու իրենց ա- վանդները:

Ուժեղացրած կերպով գրամանիշ- ներ բաց թողնելու և նրանց դնողու- նակության անկման հետևանքով՝ ավանդներն անընդհատորեն արժե- զրկվում էին: Նոր ավանդների մուտք լինելը համարյա թե ամբողջովին բնդհատվեց: Ավանդատուներին հա- տուկ հայտարարություններով տեղե- կություն տրվեց այն մասին, վոր նրանց հարկավոր է հետ ստանալ իրենց միջոցները:

Չպահանջված ավանդները 1920 թվականին փոխանցվեցին Ժողո- վրդական բանկի (վորի հետ խնայո- դական գրամարկդները միաձուլվեցին 1919 թ.) ֆինրաթինների մտից-յեկից գրամարկդներում ավանդատուների համար բացված հաշիվներին: Դրամի հետագա արժեզրկումն այնքան զգալի չէր, վոր հպահանջված գու- մարները վերածվեցին կոպեկների

չնչին մասերի *): Մինչև 1919-1920 թվականները գոյություն ունեցող խնայողական գրամարկդները մուծ- ված ավանդների վճարումը դադարեց- վեց:

Ժողովրդական տնտեսության վե- բականչման խաղաղ աշխատանքին անցնելու հետ միասին՝ կազմակերպ- վեցին պետական աշխատավորական խնայողական գրամարկդներ: Խնայո- դական գրամարկդներ կազմակերպե- լու մասին որենքը հաստատվեց 1922 թվականի դեկտեմբերի 26-ին: Իր կազմակերպվելուց հետո յեղած սկզբնական չրջանում, խորհրդային գրամանիշների կուրսի չարունակվող անկման ժամանակ՝ խնայողական գրամարկդների հիմնական խնդիրն էր՝ աշխատավորների աշխատավար- ձի ապահովագրումն՝ արժեզրկու- մից: Խորհուրդների Համառուսական X համագումարի վորոշմամբ՝ խնա-

*) Թե վորքան մեծ էր՝ այդ արժեզրկու- մը, յերևում է նրանից, վոր գրամական բարենորոգումը վերջացնելու ժամանակ (1924 թվականին) նոր ձևի մեկ ուրբին հավասարեցրած էր մինչև խնայողական գրամարկդների լիկվիդացիան յեղած ժա- մանակամիջոցում բաց թողնված գրամա- նիշները 50 միլիարդ ուրբում:

յողական գրամարկդները կազմա- կերպեցին ավանդների ընդունումը վոսկու հաշվարկումով: Այդ տեսակ ավանդները վճարվում էին ավան- դատուներին ցանկացած ժամանակ, խորհրդային գրամանիշներով՝ ըստ ուրվա կուրսի:

Չնայած նրան, վոր ապահովա- դելու նպատակով ավանդ մուծվող գումարները սովորաբար չատ կարճ ժամանակ էին պահվում խնայողա- կան գրամարկդներում, ավանդների ընդհանուր գումարը, գրամական բարենորոգումն ավարտելու մոմեն- տին՝ (1924 թ. մարտի 1-ին) հա- տավ 18,3 միլիոն ուրբում, վոսկու հաշվարկումով: Մեկ և քառորդ տարվա ընթացքում (1924 թ. մար- տի 1-ին) բացվել էին 2568 խնայո- դական գրամարկդներ:

1924 թվականին ավարտվեց գրա- մական ուժեղացումը, վորի հետևանքով ստեղծվեց նոր, կայուն վալյուտա: Այդ բարենպաստ պայ- մաններ ստեղծեց խնայողական գոր- ծի հետագա զարգացման համար:

Արդեն 1924—25 տնտեսական տար- վա վերջին՝ խնայողական գրամար- կդների քանակը հասավ 7362-ի, իսկ ավանդների մնացորդը— 21,3 միլիոն ուրբում:

Յերկրի սոցիալիստական լիզուտ- տրիալիզացիան զգալի չափով ուժե- դացրեց խնայողական գործի դա- դացման տեմպերը: 1926—1929 թվա- կաններին, խնայողական գրամար- կդների ցանցն աճեց մինչև 20364 միլիարդի: Ընդամեն՝ խնայողական գրամարկդների քանակը քաղաքնե- րում՝ 3209-ից հասավ մինչև 8787-ի, այսինքն՝ ավելացավ 174 տոկոսով, իսկ գյուղում՝ 4153-ից հասավ մինչև 11577-ի, այսինքն՝ ավելացավ 179 տոկոսով: Այդպի- սով՝ այդ տարիներին, խնայողական գրամարկդների ցանցի աճը քաղա- քում և գյուղում մոտավորապես միասնական էր: Բանվորների և ծա- տայողների քանակի մեծանալն այդ

տարիներին, աշխատավորների յեկա- մունների աճը և գրա հետ միասին՝ խնայողական գրամարկդների ցանցի լայնացումն արտահայտվեցին ա- վանդների գումարի արագորեն աճ- ման մեջ: 1928—29 թվականի վեր- ջին, ավանդների մնացորդը հասավ 315,8 միլիոն ուրբում:

Գյուղատնտեսության կոլեկտիվա- ցումը, գյուղի սոցիալիստական վե- բականացումն անհրաժեշտություն ստեղծեց խնայողական գրամարկդ- ների ցանցն ուժեղ կերպով գյուղում զարգացնելու գործում:

1930—1934 թվականներին ընթաց- քում կազմակերպվեցին մեծ թվով նոր խնայողական գրամարկդներ: Այդ ժամանակաշրջանում առանձնապես բազմաթիվ նոր գրամարկդներ բաց- վեցին գյուղական վայրերում: 1934

թ. վերջին, խնայողական գրամար- կդների թիվը քաղաքում հասավ 11924-ի, գյուղում— 29952-ի: Այդ- պիսով՝ 1930 թ. սկզբից համե- մատությամբ՝ խնայողական գրա- մարկդների ցանցը քաղաքում մեծա- ցավ մոտավորապես 1/3-ով, իսկ գյուղում— ավելի քան 2,5 անգամ:

Սակայն գրամարկդների ցանցը լայնանում էր առանց պլանի: Մերթ կամայանիայի կարգով բացվում էին հազարավոր նոր խնայողական գրա- մարկդներ, մերթ կրկին կամպա- նիայի կարգով հազարավոր խնայո- դական գրամարկդներ փակվում է- յին: Հաճախ գրամարկդները վերըս- տին բացվում էին հենց այն տեղե- րում, վորտեղ գրանից քիչ առաջ նրանք փակվել էին:

Խնայողական գրամարկդների ցան- ցի լայնացումը գյուղում հարց ա- ուջ բերեց գյուղական խնայողական գրամարկդներին ներդրավելու հան- բանացված տնտեսության կազմա- կերպությունների գրամարկդային սպասարկման աշխատանքներում: Այդ միջոցառումը պայմանավորված էր

մի կողմից նրանով, վոր դուրս-
կան խնայողական գրամարկդները
բաժանանաչափ չեյին բեռնավորված
իրենց միասնական աշխատանքնե-
րով, մյուս կողմից՝ հանրայնացված
անտեսութեան կազմակերպութեան
ներքին թիվը դուրսում մեծանալով և
գրամարկդային գործառնութեանը
վարելու փորձը նրանց մոտ բացա-
կայելով: Խնայողական գրամարկդ-
ները լայնորեն ծախսեցին կոյտնո-
տութեանների գրամարկդային սպա-
սարկումը, աշխատավարձ եյին տա-
լիս խորհրդանշանութեանների բան-
վորներին և ծառայողներին, գրամ
եյին վճարում միեւրոյ կազմակեր-
պութեանների հանձնարարութեան-
ներով և այլն: Վերջապես բազմա-
թիվ դուրսական խնայողական գրա-
մարկդներ ներդրակել եյին դու-
րական խորհուրդների լրիվ գրա-
մարկդային սպասարկման աշխա-
տանքներում, մասնավորապես բնակ-
չութեանից հարկեր և այլ վճարում-
ներ ընդունելու համար:

Խնայողական գրամարկդներին սիս-
տեմի աշխատանքներում կարևորա-
դույն նշանակութեան ունեցալ պե-
տական փոխառութեանների պծով
1931-1932 թվականներին նոր Փոստ-
գիտներ նրան հանձնելը: Խնայողա-
կան գրամարկդներին վրա դրվեց այն
բոլոր աշխատանքները, վորոնք կապ-
ված եյին պետական փոխառու-
թեանները, բնակչութեան մեջ իրաց-
նելու և փոխառութեանների պար-
տաւորութեաններին սպասարկելու
հետ:

1929 թվականի վերջերից, բազ-
մաթիվ քաղաքներում սկսվեց լայ-
նորեն անցկացվել զանազան հիմնա-
կութեանների և ձեռնարկութեաննե-
րի բանվորներին և ծառայողներին
խնայողական գրամարկդներին միջո-
ցով աշխատավարձ վճարելու գոր-
ծառնութեաններ: Յենթադրվում էր,
վոր այդ ճանապարհով կհեշտանա
բանվորների և ծառայողների կող-
մից աշխատավարձ ստանալը և վոր

այդ գործառնութեանները կնպաս-
տեն ավանդների աճմանը խնայողա-
կան գրամարկդներում, քանի վոր
բանվորներն ու ծառայողներն իրենց
աշխատավարձն ստանալու եյին մաս-
մաս՝ հարկ յեղած չափով, թողնելով
ամենամոտ սրերին իրենց վոչ հար-
կավոր գումարները խնայողական
գրամարկդում պահելով իրենց հա-
շիվներում: Փորձը ցույց տվեց, սա-
կայն վոր խնայողական գրամարկդ-
ների միջոցով աշխատավարձ վճա-
րելու կարգն անհարմար է աշխա-
տավորների համար և առանձնապես
չի ուժեղացնում ավանդների աճու-
մը: Աշխատավարձը հաշվեդրելու և
տալու աշխատանքները խնայողական
գրամարկդներին համար բաժանան
մեծածախալ եյին: Բացի դրանից,
մի շարք տեղերում աշխատավարձը
խնայողական գրամարկդներին միջո-
ցով վճարելիս՝ խախտում էր ա-
վանդներ մուծելու կամավորութեան-
նը և տրվող աշխատավարձը հար-
կադիր կերպով հաշվեդրվում էր
վորպես ավանդ:

Այդ պատճառով 1931 թվականի
վերջում, խնայողական գրամարկդ-
ները դադարեցրին աշխատավարձ
վճարելու գործառնութեաններ կա-
տարելը: Բանվորներին և ծառայող-
ներին աշխատավարձ վճարելը ներ-
կայումս կտրականապես արգելված
է խնայողական գրամարկդներին:
Իրենց բոլոր ուշադրութեանը նրանք
պետք է ուղղեն դեպի իրենց հիմ-
նական խնդրի վատարումը, այն է՝
ներդրակել աշխատավորների խնա-
յողութեանները և կուտուրական
կերպով սպասարկել ավանդատու-
ներին, պետական փոխառութեաննե-
րի պարտաւորութեաններին և մյուս
հաճախորդներին:

Սկսած 1929—1930 թվականներից,
խնայողական գրամարկդներում կազ-
մակերպվեցին նաև բնակչութեան
վճարումների անկանխիկ հաշվար-
կումներ: Այդ գործառնութեանները
մտցվել եյին քաղաքներում՝ ավան-
դատուներին լավադույն կերպով

սպասարկելու և կոմունալ ծառայու-
թեանների (բնակարանի, երկտրո-
կներգիայի, հեռախոսի և այլն) վը-
ճարումները նրանց համար հեշտաց-
նելու նպատակով:

Խնայողական գրամարկդների ցան-
քի լայնացումն անհրաժեշտ պա-
մաններ ստեղծեց ավանդների խոշոր
աճման համար: Բայց և այնպես
խնայողական գրամարկդները չկարո-
ղացան փաստորեն ոգտադրոճել ի-
րենց մոտ յեղած հնարավորութեան-
ներն աշխատավորներին խնայողու-
թեանները ներդրակելու համար:

Ճիշտ է, խնայողական գրամար-
կդները ներդրակել եյին զգալի
թիվով ավանդատուներ, բայց ավան-
դատուների թիվը մեծացնելու հե-
տեից ընկած, չկարողացան կազմա-
կերպել նրանց ճշտորեն սպասարկե-
լը: Ավանդատուների զգալի մասը
չուղղեց խնայողական գրամարկդ-
ներին՝ իրենց բոլոր խնայողութեան-
ները պահելու համար: Շատերն ա-
վանդատու եյին համարվում միայն
ձեռնարկներ, պահելով իրենց հա-
շիվներում մի քանի ուղբի:

Այդ բոլորը բացատրվում էր խնա-
յողական գրամարկդների աշխա-
տանքներում յեղած խոշորագույն
կազմակերպչական-տեխնիկական թե-
րութեաններով: Նրանց շենքերը կեղ-
տոտ եյին և վատ կահավորված, մի
քանի գրամարկդներ վոչ միշտ եյին
ապահովված գրամական կանխիկով,
գրամարկդների մի մասը հեռավո-
րութեամբ անհաջող էր տեղավոր-
ված: Բնակչութեանը ճշտորեն սպա-
սարկելը կազմակերպելու մասին սիս-
տեմատիկ հոգատարութեանը փաս-
տորեն բացակայում էր: Խնայողա-
կան գործը ժողովրդականացնելու
համար կազմակերպվում եյին հատուկ
«խնայողութեանների ամսորյակի-
ներ», «խնայողութեանների յերկա-
բաթորյակներ» և այլն, վորոնց անց
կացնելու ժամանակ հաճախ խախտ-
վում էր ավանդների կամավորու-
թեանը:

Կարևոր նշանակութեան ունեցալ
ԽՍՀ Միութեան Ժողովրդական Կո-
միտեանների Խորհրդի կողմից 1933
թ. հունիսի 20-ին ընդունված վո-
րոշումը՝ պետական աշխատավորական
խնայողական գրամարկդների սիս-
տեմի աշխատանքների մասին: Այդ
վորոշման մեջ նշվեցին ավանդա-
տուների և պետական փոխառու-
թեանների պարտաւորութեանների
սպասարկման աշխատանքների թերու-
թեանները: ԽՍՀ Մ ԺԿԽ-ը պարտա-
վորեցրեց ԽՍՀ Մ-ի Ֆինանսական
անցկացնելու մի շարք միջոցառում-
ներ՝ այդ թերութեանները վերաց-
նելու համար: Վորոշման առաջին
կետում նշված էր՝ «Առաջարկել
ԽՍՀ Միութեան ֆինանսների Ժողո-
վրդական Կոմիտեին՝ թույլ
չտալու խնայողական գրամարկդնե-
րում ավանդատուներին իրենց պա-
հանջով գրամ տալու վորեն ձգձը-
ղումներ և դատական պատասխանա-
ւորութեան յենթարկել ավանդատու-
ներին գրամ տալը ձգձգելու մեջ մե-
ղավորներին»: Այդ նույն վորոշու-
մով խնայողական գրամարկդներին
սիստեմում հիմնվեց վերահսկիչ-վե-
րատուչիչների հատուկ ապարատ՝
չարաչահումների և հափշտակումնե-
րի դեմ պայքարելու նպատակով:

Անհրաժեշտ է հիշատակել ևս մեկ
կարևոր միջոցառման մասին, վորն
անցկացվեց ԽՍՀ Մ ԺԿԽ-ի 1933 թ.
հունիսի 20-ի վորոշման կապակցու-
թեամբ: Այդպիսի միջոցառում հան-
դիսացալ ավանդի նվազագույն չա-
փի սահմանում՝ 5 ուղբի առանձին
քաղաքացիների համար և 25 ուղբի
կազմակերպութեանների համար: Այդ
հնարավորութեան տվեց խնայողա-
կան գրամարկդներին՝ իրենց ուշա-
գրութեանը կենտրոնացնելու այն
ավանդատուներին սպասարկելու
վրա, վորոնք իրենց խնայողութեան-
ներն իսկապես պահում են խնայո-
ղական գրամարկդներում:

Սկսած 1933 թ. յերկրորդ կեսից,
ավանդների հոսանքը դեպի խնայո-

դական զբամարկղներն ուժեղացավ: Ամբողջ 1933 թ. ընթացքում խնայողական զբամարկղները ներգրավեցին 207,5 միլիոն ուսուցիչ ավանդ: 1934 թ. աճումը վաղմուսն եր արդեն 491 միլիոն ուսուցիչ, ավելի, քան նախընթաց տարիներին յուրաքանչյուրում:

1934 թ. վերջին, ավանդների մնացորդը խնայողական զբամարկղներում աճեց և հասավ մինչև 1638,1 միլիոն ուսուցիչ:

Սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու համար մղվող պայքարի տարիները և նոր Սահմանադրության կատարումը հանդիսացան ժողովրդական խնայողական ժամանակաշրջան: 1935-1937 թվականներին կրկին խտիվ ուժեղացավ և ավանդների հոսանքը դեպի խնայողական զբամարկղները: Յերեք տարում (1935, 1936 և 1937), ավանդների մնացորդը խնայողական զբամարկղներում մեծացավ և հասավ մինչև 4514,9 միլիոն ուսուցիչ, այսինքն՝ համարյա յերեք անգամ: Ավանդների աճումը միայն 1937 թ. վականին՝ հավասարվում եր խնայողական զբամարկղների կողմից իրենց դրույթյան առաջին 10 տարվայի ընթացքում ներգրավված ավանդների ընդհանուր մնացորդին (974,3 միլիոն ուսուցիչ 1933 թ. սկզբին):

1938 թ. սկզբին ավանդների մնացորդը քաղաքային խնայողական զբամարկղներում կազմում եր արդեն 3814,3 միլիոն ուսուցիչ, հակ ավանդների մնացորդը գյուղական վայրերում գտնվող խնայողական զբամարկղներում՝ 700,6 միլիոն ուսուցիչ:

Ավանդների հոսանքն էլ ավելի ուժեղացավ 1938 թվականին: Այդ տարիս առաջին յոթ ամիսներում (հունվար-հուլիս) ավանդների մնացորդը խնայողական զբամարկղներում ավելացավ 1192 միլիոն ուսուցիչ (այդ դեմարից 929 միլիոն ուսուցիչ ներգրավել են քաղաքային խնայողական զբամարկղները և 263 միլիոնը՝ գյուղականը):

Ավանդների աճը 1938 թ. յոթ ամսում համարյա ավելի քան 2 անգամ գերազանցում և 1937 թ. այդ նույն ամիսների ավանդների աճին*):

1938 թ. ողոստոսի 1-ին ավանդների մնացորդը խնայողական զբամարկղներում գերազանցում եր 5,7 միլիարդ ուսուցիչ:

ՈՍՀ Միության ժողովրդական կոմիտեների խորհրդի 1936 թ. հունիսի 14-ի վերջին հիման վրա՝ խնայողական զբամարկղները 1936 թ. հունիսի 1-ից իջեցրին տոկոսային դրույթն առանձին քաղաքացիների և կոլտնտեսությունների ավանդների համար մինչև 3 տոկոս տարեկան (8 տոկոսի և 6 տոկոսի դեմաց), իսկ ձեռնարկությունների, հիմնարկությունների և հասարակական կազմակերպությունների ավանդների համար՝ մինչև 1 տոկոս տարեկան (3 տոկոսի դեմաց):

Ռուսիայի կուրսի ամրացումը նախատվյալներ ստեղծեց վարկային հիմնարկությունների գործառնությունների տոկոսային դրույթն իջեցնելու համար, նույն թվում խնայողական զբամարկղներին արվող ավանդների տոկոսային դրույթների համար: Ավանդից ստացվող յեկամուտով ավանդատուն այժմ կարող և զգալիորեն ավելի մթերքներ և այլն սպառման առարկաներ ձեռք բերել, քան առաջ: Տոկոսային դրույթների իջեցումը թույլ տվեց նույնպես զգալիորեն ևժանացնել վարկը: Վարկային հիմնարկությունների կողմից (նույն թվում և խնայողական զբամարկղների կողմից՝ իրենց ներգրավված միջոցների գծով) վճարվող տոկոսների դրույթն իջեցումը տեղի ունեցավ միաժամանակ այն տոկոսի իջեցման հետ, վերադարձնելով դանձում ելին բանկերը արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, արանսպորտին, առևտրին արվող

*) 1938 թ. տվյալները նախնական են:

փոխառությունների համար: Այդ իր հերթին նպատակում և հատկապես գների հետագա իջեցմանը և աշխատավորների բարեկեցության բարձրացմանը:

Իրենց ավանդները խնայողական զբամարկղներում պահող աշխատավորները լիակատար հավանություն տվին ՈՍՀ Միության ժողովրդական կոմիտեների խորհրդի վերջին: Տոկոսային դրույթներն իջեցնելու վերջումը հրապարակելուց ամիջապես հետո՝ ավանդների հոսանքը վոչ միայն չպակասեց, այլև նույնիսկ աճեց:

1935-1936 թվականների ընթացքում խնայողական զբամարկղներն աղատվեցին իրենց կողմից կատարվող մի շարք գործառնություններից: Այդպես խնայողական զբամարկղները դադարեցրին քաղաքներում կոմունալ ծառայությունների համար կանխիկ դրամով վճարումներ ընդունելը և մի քանի այլ կոմիտեին դործառնություններ: Այդ կապված եր խնայողական գործառնությունների դարգացման հետ ավանդների և փոխառությունների գծով:

Հանրաքննարկում տնտեսության կազմակերպությունների ֆինանսական աշխատանքների ամրացումը գյուղում հնարավորություն տվեց խնայողական զբամարկղներին՝ դադարեցնելու խորհրդատեսությունների և այլ կազմակերպությունների դրամարկղային սպասարկումը: 1935 թվականներին գյուղական զբամարկղները դադարեցրին հարկերի և ապահովագրական վճարումների ընդունումը, գյուղական խորհուրդներում հատուկ պանձապահներ առանձնացնելու կապակցությամբ:

1937 թվականին գյուղական խորհուրդներն աղատվեցին հարկերը հաշվելու և դանձելու աշխատանքներից: Այդ պատճառով անհրաժեշտություն ծագեց վերստին ներգրավել գյուղական խնայողական զբա-

մարկղները պետական ապահովագրության հարկերն ու վճարումներն ընդունելու գործառնություններ կատարելու համար: Սահմանվեց հարկային և ապահովագրական վճարումները գյուղում հավաքելու կարգ՝ գյուղական մտից-յեկից զբամարկղներին, չըջֆինրաթինների չըջիկ դրամարկղներին, գյուղական խնայողական զբամարկղների և տեղամասային տեսուչների միջոցով: ՈՍՀ Միության ժողովրդական կոմիտեների խորհրդի 1938 թ. ապրիլի 26-ի վերջումով այդ կարգը վերացվում և, վերջինիս նա ստեղծում և մի շարք անհարմարություններ և շատ դժվարություններ՝ գյուղական բնակչության կողմից հարկային և ապահովագրական վճարումները մուծելու գործում և լրիվ չափով չի ապահովում պետության շահերը:

Հարկային և ապահովագրական վճարումները գյուղում հավաքելու կազմակերպումը բարելավելու համար, ՈՍՀ Մ-ի ժողովրդական խորհուրդը հիմնել հարկային գործակալների օրգաններ: Այդ գործակալների վրա յե դրվում գյուղական բնակչությունից հարկային և ապահովագրական վճարումները հավաքելը:

Ավանդների աճումը քաղաքում և գյուղում անկասկած զգալիորեն ավելի արագ կլինե, յեթե խնայողական զբամարկղները կարողանային ողոսագործել այն բացառիկ բարենպաստ հնարավորությունները, վերջինիս ամբողջ յերկրում խնայողությունները ներգրավելու համար: Մինչդեռ խնայողական զբամարկղները չարունակում ելին շատ վատ աշխատել: Նրանց ցանցը, առանձնապես գյուղում, անթույլատրելի կերպով տակավ եր, աշխատակիցների ընտրությունն ու վերականգնումն անբավարար, ավանդների գծով մասսայական-րոշտարական աշխատանքներ բնակչության մեջ փաստորեն չեղ տարվում վոչ կենտրոնում, վոչ տեղերում:

Այդ առաջ բերեց այն, վոր ամբողջ 1937 թ. ընթացքում խնայողական դրամարկղները չեյին կատարում նրանց համար սահմանվող ավանդները ներգրավման պլանները

Ֆինանսական մարմինների և խնայողական դրամարկղների գեկավարությունում խցկված ժողովրդի թշնամիներն անց եյին կացնում խրնայեցրամարկղների աշխատանքները քայքայող միջոցառումներ: 1935—1936 թվականների ընթացքում ժողովրդի թշնամիները կենսագործեցին խնայողական դրամարկղների մասսայական փակումը: Փակված դրամարկղների թիվը հասավ նրանց ընդհանուր թվի կեսին: Դրա հետևանքով, 1937 թ. սկզբին խնայողական դրամարկղներ թիվը քաղաքում նրվազեց և հասավ մինչև 6019-ի, իսկ գյուղում—մինչև 12·909-ի: Այդ ժամանակներում ընդամենը գործում էյին միայն 18·928 խնայողական դրամարկղներ, 1935 թ. սկզբին յեղած 41·876-ի դիմաց: Վնասարարները, մասնավորապես, առանձնապես լայնորեն փակում էյին գործակալությունները: Առ 1-ն հունվարի 1935 թ. գործող 27·680 գործակալություններից 1937 թ. սկզբին մնացել էր միայն 4·813-ը: Այդպիսով՝ գործակալությունների թիվը յերկու տարվա ընթացքում պակասեց համարյա վեց անգամ: Մինչդեռ բազմաթիվ կետերում, վորտեղ հաստիքային աշխատողով սպասարկվող խնայողական դրամարկղի կազմակերպումը չի արդարացնում իրեն, նպատակահարմար է հանդիսանում գործակալություն կազմակերպումը: Բացի խնայողական դրամարկղների ցանցը կծկելուց, ժողովրդի թշնամիները գիտակցաբար դժվարություններ եյին ստեղծում պարտատոմսերի դրավի դիմաց փոխառություններ ստանալու համար խնայողական դրամարկղներին դիմող աշխատավորների համար: Նրանք խախտում էյին ավանդների ներգրավման

կամավորությունը, ապարատի կադրերը լցնում էյին զանազան խորթ տարրերով, նպաստում էյին սոցիալիստական սեփականությունը հափըշտակելու գործին և այլն:

խնայողական դրամարկղների սխտեմը և նրա աշխատողներից յուրաքանչյուրը պետք է իրենց համար առանձնապես լուրջ հետևություններ անեն 1937 թ. փետրվար—մարտին և 1938 թ. հունվարին կայացած Համ. կ(բ) կ(կ) պատմական պլենումների վորոշումներից: Խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի ուժեղացնել քաղաքական զգոնությունը, ամենակարճ ժամկետում լրկվողացրայի յենթարկել վնասարարության բոլոր հետևանքները: Պետք է քաղաքականապես դաստիարակել խնայողական դրամարկղների աշխատողների կադրերը բոլշևիկյան վորդով, վերանայել խնայողական դրամարկղների ամբողջ աշխատանքը՝ հաճախողների սպասարկումը բարելավելու և սոցիալիստական սեփականության պահպանությունն ուժեղացնելու տեսանկյունով:

ԽՍՀՄ-ի Գերգույն Խորհրդի յերկրորդ նստաչրջանը 1938 թ. ոգոստոսի 14-ին հաստատեց ԽՍՀՄ-ի միասնական պետական բյուջեն—խորհրդային պետության հիմնական ֆինանսական պլանը, 1938 թ. սոցիալիստական չինարարություն հսկայական ֆինանսական ծրագիրը:

Բյուջեյի սկզբնական նախագիծը նախատեսնում էր բնակչության ավանդների ներգրավումը խնայողական դրամարկղների կողմից 1938 թ. 1·300 միլիոն ուրբլի: Աշխատավորների բարեկեցության աճումը, բրնակչության ունեւորությունն ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում ստեղծում են պայմաններ՝ խնայողությունների նշանակալից չափով չատ գումարներ ավանդներում ներգրավելու համար: Այդ պատճառով ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհուրդը, Միություն Խորհրդի և Ազգություն

ների Խորհրդի բյուջետային հանձնաժողովների առաջարկությամբ՝ վորոշում ընդունեց բարձրացնել բյուջեյի յեկամուտները, ներգրավելով խնայողական դրամարկղներում բնակչության 300 միլիոն ուրբլու ավանդներ:

Այդպիսով՝ խնայողական դրամարկղները պետք է 1938 թ. ներգրավեն 1·600 միլիոն ուրբլի սոցիալիստական չինարարության ֆինանսավորման համար: Այդ պատվավոր

և պատասխանատու խնդիրը դրված է խնայողական դրամարկղների աշխատողների ամբողջ բազմահազար կուլեկտիվի առաջ: Այդ խնդիրն իրականացնելու և աշխատավորների ավանդների հետագա ելավելի արագ աճման համար 1939 թ. պետք է պայքարի խնայողական դրամարկղի յուրաքանչյուր աշխատող, հասնելով խնայողությունների ներգրավման սահմանվող պլանների սխտեմատիկ կատարմանը և գերակատարմանը:

3. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՎԱՆԴՆԵՐԸ

1938 թ. սկզբին ԽՍՀՄ-ի խնայողական դրամարկղներում կար տասնեւոթ միլիոնից ավելի ավանդատուներ*):

1937 թ. ընթացքում խնայողական դրամարկղների ավանդատուների ընդհանուր քանակն աճեց կես միլիոն մարդով:

1938 թ. խնայողական դրամարկղների ավանդատուների թիվն ավելի արագ է աճում, քան 1937 թ.: Նախնական տվյալների համաձայն՝ արդեն 1938 թ. ոգոստոսին ավանդատուների թիվը համարյա հասավ տասնեւհինգ միլիոնի:

Սակայն խնայողական դրամարկղներից փաստորեն ոգտվող աշխատավորների թիվն զգալիորեն բարձր է, վորովհետեւ չատերն իրենց խնայողությունները պահում են այնտեղ վոչ թե ամբողջ տարին, այլ ժամանակ առ ժամանակ հարկավոր չափով, փակելով և վերստին բացելով իրենց հաշիվները: Միայն 1937 թ. ընթացքում բացվել է 5,9 միլիոն նոր հաշիվներ: Խնայողական դրամարկղներում 1937 թ. հաշիվներ ունեցած ավանդատուների ընդհանուր

թիվը մոտավորապես կարելի յե վորոշել 20 միլիոն մարդ:

Շատ ցուցադրական են խոշոր ավանդների թվի աճման մասին յեղած տվյալները վերջին տարիներում:

Յերեք տարվա ընթացքում, 1934 թ. սկզբից մինչև 1937 թ. սկզբը, ավանդների թիվը 100-ից մինչև 500 ուրբլու գումարների նկատմամբ՝ մեծացավ 1·448 հազարից մինչև 1·707 հազար, 500-ից մինչև 1·000 ուրբլու գումարների նկատմամբ՝ 317 հազարից մինչև 816 հազար, 1·000 ուրբլուց բարձր գումարների նկատմամբ 166 հազարից մինչև 1·053 հազար: 1937 թ. խոշոր ավանդների թիվը կրկին աճեց: Այդպես՝ 1938 թ. սկզբին՝ 1·000 ուրբլուց բարձր պահում էյին խնայողամարկղներում արդեն 1·477 հազար մարդ, այսինքն՝ համարյա 9 անգամ ավելի, քան 1934 թ., իսկ 500-ից մինչև 1·000 ուրբլու հազար մարդ, այսինքն՝ 31,6 անգամ ավելի, քան 1934 թ. Մոսկվայում և Լենինգրադում յուրաքանչյուր չորրորդ—չինգերորդ նոր ավանդատուն հաշիվ բացելիս՝ մուծում է միանգամից 1·000 ուրբլուց ավելի:

Խոշոր խնայողությունների աճման գործում ազդեցություն ունեցավ ստախանովական շարժման լայն զարգացումը: Միանգամայն բնորոշ է,

*) Այստեղ մտնում են միայն այն ավանդատուները, վորոնք իրենց հաշիվներում ունեն 5 ուրբլուց բարձր ավանդներ:

մասնավորապես, բանվորների խոշոր խնայողութունների արագ աճումը:

1938 թ. սկզբներին 1.000 ու բարձր ավանդներ ունեյին համարյա կես միլիոն բանվորներ:

Յեւ վերջին այդ նման չի նրան, ինչ յեղել է մինչ-հեղափոխական Ռուսաստանում:

Վերլուծելով Ռուսաստանի խնայողական դրամարկղների մասին յեղած 1899 թ. տվյալները, Լենինը գրում էր («Ռուսաստանի տնտեսական կյանքի» հոդվածում)՝ «Յեւ այդպես, Փարբիկա-գործարանային բանվորները գրավում են, ելականում, վերջին տեղն ըստ խնայողութունների չափի (չհաշվելով պետութան հաշվով պահվող զինվորներին), նույնիսկ աղախինն ունի խնայողութունների միջին հաշվով ավելի բարձր չափ (143 ու մեկ գրքույկին, 136 ուսերու գրքույկ) և տալիս է ավանդատուների ավելի մեծ թիվ: Այսինքն՝ աղախիններն ունեն 333 հազար գրքույկ՝ 48 միլ. ուսերի դուրմարով, իսկ Փարբիկա-գործարանային բանվորներն ունեն 157 հազար գրքույկ՝ 21 միլ. ուսերի գումարով: Մեր բարձր դասի և տուգների ամբողջ հարստութունն ստեղծող պրոլետարիատը գրված է ավելի վատթար պայմաններում, քան նրանց անձնական աղախինը» (Հ. V, էջ՝ 59):

Խորհրդային Միության մեջ պրոլետարիատը «գարձել է բոլորովին նոր դասակարգ, ԽՍՀՄ բանվոր դասակարգ, վորը վոչնչացրել է տնտեսութան փայտալիստական սխտեմը, հաստատել է արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականություն և խորհրդային հասարակությունը տանում է կոմունիզմի ճանապարհով» (Ստալին, զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին): Տարեց-տարի աճում է բանվորների բարեկեցությունը մեր յերկրում: Դա իր արտացոլումն է գտնում, մասնավորապես, բան-

վորների ավանդների աճի մեջ խնայողական դրամարկղներում: 1938 թ. սկզբին խնայողական դրամարկղների ավանդատու հանդիսացող բանվորներն իրենց հաշիվներում պահում էին մեկ միլիարդ յերկու հարյուր յերեսուն ութ միլիոն ուսերի: Բանվորների ավանդների աճը միայն 1937 թվականին կազմում էր 229 միլիոն ուսերի:

Գյուղական խնայողական դրամարկղների անբավարար քանակը և հատկապես նրանց անբավարար աշխատանքը բացասաբար ելին ազդում գյուղական բնակչության ավանդների ներդրումին վրա: 1938 թ. սկզբին՝ գյուղական խնայողական դրամարկղների ավանդների գումարը կազմում էր 700.6 միլիոն ուսերի, այսինքն՝ ԽՍՀՄ-ի խնայողական դրամարկղների ավանդների ընդհանուր գումարի 16 տոկոսը: Ճշմարիտ է, ավանդների աճումը գյուղում տարեց-տարի ուժեղանում է, բայց նույնիսկ ներկայումս գյուղական խնայողական դրամարկղները չարունակում են շատ ավատել: Հենց դրանով էլ պետք է, զգալի չափով, բացատրել այն հաղամանքը, վոր նոր ավանդների ամբողջ գումարի 77 տոկոսը 1935 թ., նոր ավանդների ամբողջ գումարի 43 տոկոսը 1936 թ. և իրենց նոր ավանդների ամբողջ գումարի 30 տոկոսը 1937 թ. կոյնտեսականներն ու մենատնտեսները մուծեցին միջ թե գյուղական, այլ բացառապես խնայողական դրամարկղները:

Խնայողական դործի դարգացման տարբերվող առանձնահատկութունը վերջին տարիների ընթացքում հանդիսանում է վոչ միայն ավանդների ընդհանուր գումարի բուռն աճումը, այլև մեկ ավանդատույի խնայողութունների միջին գումարի նախնական բարձրացումը: Յերկրորդ հնգամյակի տարիներին (1933 թ. հունվարի 1-ից մինչև 1938 հունվարի 1-ը) ավանդի միջին չափն աճեց

40 ուսերուց մինչև 322 ուսերի, այսինքն՝ ավելի քան 8 անգամ: Մոսկվայում՝ ավանդի միջին չափը 1938 թվականի սկզբին հասավ 741 ուսերու, Լենինգրադում 500 ուսերու, Կիևում՝ 559 ուսերու, Իվանովում՝ 434 ուսերու:

Ավանդների յուրաքանչյուր ուսերին պահվել է խնայողական դրամարկղում՝ 1938 թ.—99 ուս, 1934 թ. միջին հաշվով—130 ուս, 1935 թ.—մոտ 159 ուս, 1936 թ.—մոտ 166 ուս, իսկ 1937 թ. արդեն մոտ 215 ուս: Այդպիսով՝ ուսերին պահելու միջին ժամկետն ամեն տարի զգալորեն մեծանում է:

Աշխատավորների խնայողութունների բուռն աճը բոլոր միութենական հանրապետութուններում՝ հանդիսանում է մեր բազմազգ սոցիա-

լիստական պետության ժողովրդների բարեկեցության վերելքի վառ ցուցանիշներից մեկը: Միայն յերկու տարում (1936—1937) ավանդները խնայողական դրամարկղներում, չըհաշվելով չպահանջված տոկոսները 1937 թ. համար, աճեցին՝ ՌՍՖՍՀ-ում—79 տոկոսով, Ուկրաինական ԽՍՀ—մ 85 տոկոսով, Բելոռուսական ԽՍՀ—մ—74 տոկոսով: Ադրբեջանական ԽՍՀ—մ—79 տոկոսով, Վրացական ԽՍՀ—մ—85 տոկոսով, Հայկական ԽՍՀ—մ—87 տոկոսով, Թուրքմենական ԽՍՀ—մ—62 տոկոսով, Ուզբեկական ԽՍՀ—մ—68 տոկոսով, Տաջիկական ԽՍՀ—մ—80 տոկոսով, Ղազախական ԽՍՀ—մ—75 տոկոսով և Կիրգիզական ԽՍՀ—մ—105 տոկոսով:

4. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Խնայողական դրամարկղները հանդիսանում են միասնական վարկային հիմնարկություն, վորը գործում է տնտեսական հաշվարկման սկզբունքներով և ունի բաժանմունքներիցանց Խորհրդային Միության բոլոր բաղադրներում և չըջաններում: 1938 թ. սկզբին ԽՍՀՄ-ում կար 25170 խնայողական դրամարկղներ, վորոնցից բաղադրներում—6335 և գյուղերում—18835, 1938 թ. հունվար-սեպտեմբեր ընթացքում վնասարարութան հետեանքները վերացնելու նպատակով, բացվեցին 6.5 հազար նոր խնայողական դրամարկղներ, գլխավորապես գյուղում:

Խնայողական դրամարկղների ամբողջ սխտեմի աշխատանքը ժողովրդական խնայողութունները կազմակերպելու դժով, սահմանվում է միասնական պլանով: Խնայողական դրամարկղները ամբողջ Խորհրդային Միությունում ունեն միասնական կազմակերպչական կառուցվածք, հաշվառման միասնական սխտեմ և

բոլոր դործանութունները ձևակերպում են խիստ միատեսակ կարգով: Խնայողական դրամարկղների սխտեմը գտնվում է ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական կոմիտեի տակ իրավասութան տակ: Այդ սխտեմը ղեկավարում է ԽՍՀ Միության Ֆինանսների ժողովրդական կոմիտեի տակ Պետական Աշխատավորական Խնայողական Դրամարկղների և Պետական վարկի Գլխավոր վարչությունը: Այդ վարչությունը ղեկավարում է սխտեմի ամբողջ աշխատանքը: Իսկ յուրաքանչյուր առանձին Միութենական հանրապետության խնայողական դրամարկղների աշխատանքը ղեկավարում է տվյալ հանրապետության պետական աշխատավորական խնայողական դրամարկղների և Պետական վարկի վարչությունը, վորը յենթարկվում է Գլխավոր վարչությանը: Բոլոր ինքնավար հանրապետութուններում, յերկրներում և մարզերում գտնվող հանրապետական, յերկրային և մար-

դային վարչութիւններ, վորոնց անմիջականորեն ղեկավարվում է միութենական հանրապետութեան խնայողական դրամարկղների և պետական վարկի վարչութիւնը:

Վորպես ինքնուրույն վարչատնտեսական միավոր առանձնացված քաղաքներում կազմակերպվում են կենտրոնական խնայողական դրամարկղներ: Ընդամենը շրջանային բաժանում ունեցող քաղաքներում կարող է կազմվել մի քանի քաղաքի մեկ կենտրոնական խնայողական դրամարկղ, այլ մի քանի կենտրոնական խնայողական դրամարկղներ ըստ քաղաքի շրջանների թվի:

Շրջաններում, բացի վորպես ինքնուրույն վարչական միավորներ առանձնացված քաղաքներից, կազմակերպվում են շրջանային խնայողական դրամարկղներ: Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներն իրենց աշխատանքներում յենթարկվում են տվյալ հանրապետութեան, յերկրի կամ մարզի պետական աշխատավարձեր խնայողական դրամարկղների և պետական վարկի վարչութեանը:

1938 թ. սեպտեմբերի 1-ին քաղաքներում կային 1178 կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներ, իսկ գյուղում—2457 շրջանային խնայողական դրամարկղներ:

Յուրաքանչյուր կենտրոնական, կամ շրջանային խնայողական դրամարկղ իր քաղաքի կամ շրջանի տեղիտիրիայում վարում է խնայողական գործի և պետական վարկի բոլոր հարցերը: Ղեկավարում է ստորին խնայողական դրամարկղները և անմիջականորեն կատարում է գործառնութիւններ իր գործառնութեան մասի միջոցով: Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը կազմակերպում է բնակչութեան միջոցներն ավանդներում և պետական փոխառութիւններում ներդրավելը և ավանդատուներին ու

պետական փոխառութիւնները պարտադրութեամբ սպասարկելը: Նա հրահանգում է տվյալ քաղաքի կամ շրջանի բոլոր ստորին խնայողական դրամարկղներին, հետադրում է ստուգում է նրանց: Նա վարում է նաև գործառնութիւնների հաշվառումը և սահմանված ժամկետներին ներկայացնում է քաղաքի կամ շրջանի բոլոր խնայողական դրամարկղների գործառնութիւնների հաշվառութիւնը՝ այն վարչութեանը, վորին յենթարկվում է ինքը:

Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները (իրենց գործառնութեան մասերի միջոցով) կատարում են խնայողական դրամարկղների վրա դրված գործառնութիւնները լրիվ ծավալով:

1938 թ. սկզբին՝ քաղաքում գտնվող յուրաքանչյուր շրջանային և կենտրոնական խնայողական դրամարկղ ներդրավել էր բնակչութեան ավանդներ միջին հաշվով 1615 հազար ուսուրի գումարով, իսկ գյուղում տեղափոխված շրջանային դրամարկղի 151 հազար ուսուրի:

Կենտրոնական և շրջանային դրամարկղներին յենթակա ստորին խնայողական դրամարկղները բաժանվում են յերեք տիպի՝ առաջին կարգի խնայողական դրամարկղներ, յերկրորդ կարգի խնայողական դրամարկղներ և խնայողական դրամարկղներ յործակալութիւններ: Յուրաքանչյուր տիպի համար սահմանված է աշխատանքի տարրեր ծավալը*):

Առաջին կարգի խնայողական դրամարկղներն ունեն մի քանի քանի յերկու հաստիքային աշխատողներ՝ վերահսկիչ և գանձապահ: 1938 թ. սեպտեմբերի 1-ին քաղաքներում

*) Յուրաքանչյուր տիպի խնայողական դրամարկղի աշխատանքի բովանդակութիւնը պետական փոխառութիւնների դժով այս դրքով յիշում է չարագրված:

կար առաջին կարգի 1401 դրամարկղներ, իսկ գյուղերում—1502 աղաքի դրամարկղներ: Այդ տիպի դրամարկղները նույնպես, ինչպես և կենտրոնական ու շրջանայինը, կատարում են բոլոր տեսակի գործառնութիւններ: Սակայն, ներկայացված ավանդները նրանք չեն ընդունում:

Առաջին կարգի խնայողական դրամարկղներն ավելի խոշոր են հանդիսանում և իրենց կողմից ներդրվում խնայողութիւնների գումարով: Բնակչութեան ավանդների միջին մնացորդը մեկ դրամարկղի նկատմամբ կազմում էր 1937 թվի ըսկզբին 1346 հազար ուսուրի քաղաքում և 33 հազար ուսուրի գյուղում*):

Յերկրորդ կարգի խնայողական դրամարկղներն սպասարկվում են յերկու աշխատողով, վորոնցից մեկը հաստիքային է (վերահսկիչը) և յերկրորդը համատեղութեամբ (գանձապահ) կամ միայն մեկ հաստիքային աշխատողով, վորը կատարում է ինչպես վերահսկիչ, նույնպես և գանձապահի պարտականութիւնները: 1938 թ. սեպտեմբերի 1-ին յերկրորդ կարգի խնայողական դրամարկղներ թիվը կազմում էր քաղաքներում 2027, իսկ գյուղական վայրերում—10300: Նրանց կողմից

*) Գյուղական խնայողական դրամարկղների մի մասը 1937 թ. վերաբերում էր առաջին կարգի խնայողական դրամարկղներին միայն հարկային և ապահովագրական վճարումները նրանց կողմից ընդունելու կազմակերպելու կապակցութեամբ: 1938 թ. վաղնիս հարկերի և ապահովագրական վճարումների ընդունումը դադարեցնելուց հետո, այդ դրամարկղները նորից վերակազմվեցին վորպես 2-րդ կարգի խնայողական դրամարկղներ: Դրա հետեւանքով՝ գյուղական առաջին կարգի մեկ խնայողական դրամարկղում 1938 թ. պահով (միջին չափով) ավանդներ մնացորդը գումարը եւանակալից չափով մեծացավ:

կատարվող գործառնութիւնների շրջանակը սահմանափակված է: Նրանք չեն ընդունում ներկայացված ավանդներ, ակկերդիտիվներ, չեն տալիս և կազմակերպութիւնների համար ընթացիկ հաշիվներ չեն բացում, (բացի գյուղական խորհուրդներից և կոլտնտեսութիւններից): Կոմիտիոն գործառնութիւններից նրանք կատարում են միայն կուսակցական և կոմյերիտական անդամավճարների գումարների ընդունումը, հանձնաժողովների լիազորները կողմից հավաքած կյանքի կոլեկտիվ պետական ապահովագրութեան մուծումների ընդունումը նրանցից:

Յերկրորդ կարգի մեկ խնայողական դրամարկղի կողմից միջին հաշվով ներդրված ավանդների մնացորդը 1938 թվի սկզբին կազմում էր 136 հազար ուսուրի քաղաքում և 29 հազար ուսուրի գյուղում:

Խնայողական դրամարկղների գործակալութիւնները հաստիքային աշխատողներ չունեն: Գործակալութիւնն սպասարկվում է համատեղութեամբ այն հիմնարկութեան կամ ձեռնարկութեան մեկ կամ յերկու աշխատողներով, վորին կից գտնվում է նա: 1938 թ. սեպտեմբերի 1-ին քաղաքում կար 1729 գործակալութիւն, գյուղում—4576 գործակալութիւն: Նրանք կատարում են միայն առանձին քաղաքացիների ավանդների գործառնութիւններ (բացի ներկայացված ավանդներից) և փոխադրումների գործառնութիւններ:

Մեկ գործակալութեան կողմից միջին հաշվով ներդրված ավանդների մնացորդը 1938 թ. սկզբին կազմում էր քաղաքային վայրերում



33 հազար ուսուցիչ, իսկ դուռնակա-
նում — 18 հազար ուսուցիչ*):

Խնայողական դրամարկղները դը-
տրվում են կամ ինքնուրույն շենքե-
րում, կամ ուրիշ հիմնարկություն-
ներին և ձեռնարկություններին կից —
կապի հիմնարկություններին կից,
պետական բանկի բաժանմունքներին
կից, յերկաթուղային տրանսպորտի
ձեռնարկություններին և հիմնար-
կություններին կից, կուլանտեսու-
թյուններին կից, Փարբիկներին ու
գործարաններին կից և այլն: Հիմ-
նարկություններին և ձեռնարկու-
թյուններին կից գոյություն ունեն
դանազան տիպի դրամարկղներ (ա-
ռաջին և յերկրորդ կարգի և գոր-
ծակալություններ):

Կապի հիմնարկություններին և
պետական բանկի հիմնարկու-
թյուններին կից խնայողական դրամար-
կղները աշխատանքը նույնպես,
ինչպես և խնայողական դրամարկ-
ղները աշխատանքը նույնպես,
ինչպես և խնայողական դրամարկ-
ղները աշխատանքը նույնպես,
ինչպես և խնայողական դրամարկ-
ղները աշխատանքը նույնպես,

Խնայողական դրամարկղները բա-
ցումն ու փակումը, նաև նրանց մեկ
տիպից մյուսը վերափոխելն ան-

ցեկացվում խիստ կենտրոնացված
կարգով: Վաչ մի խնայողական
դրամարկղ չի կարող բացվել, փակ-
վել, կամ վերակազմվել առանց
Գլխավոր վարչության հատուկ վո-
րույման:

Հիմնական ղեկավարող աշխա-
տողները — կենտրոնական և շրջանա-
յին խնայողական դրամարկղների
վարիչները և այլ դրամարկղների
գլխավոր հաշվապահները, ԽՍՀՄ-ի
ԺԿՍ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի
1936 թվի հունիսի 2-ի վորույման
հիման վրա՝ նշանակվում և արձակ-
վում են անմիջականորեն պետական
աշխատավորական խնայողական
դրամարկղների և պետական վարկի
Գլխավոր վարչության պետի կող-
մից: Իսկ քաղաքի կամ շրջանի
խնայողական դրամարկղների մնա-
ցած աշխատողները նշանակվում և
արձակվում են տվյալ կենտրոնա-
կան և շրջանային խնայողական
դրամարկղի վարիչի կողմից:

Յուրաքանչյուր դրամարկղի աշ-
խատողները հաստիքի վորույմար
կախված են նրա աշխատանքի ծախս-
վից: Քաղաքի կամ շրջանի խնայո-
ղական դրամարկղների աշխատող-
ների ընդհանուր հաստիքը հաստատ-
վում է խնայողական դրամարկղների
հանրապետական, յերկրային կամ
մարզային վարչության կողմից:
Խնայողական դրամարկղների ամ-
բողջ սիստեմի հաստիքային աշխա-
տողների թիվը կազմում է 70 հա-
զարից ավելի մարդ:

Խնայողական դրամարկղների աշ-
խատողների աշխատավարձի դրույթ-
ները սահմանված են ԽՍՀՄ-ի Ֆին-
ժուկոմատի կողմից՝ ԽՍՀՄ-ի
ԺԿՍ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1936
թվի փետրվարի 11-ի վորույմանը
համապատասխան: Յուրաքանչյուր
պաշտոնի նկատմամբ (վերահսկիչ-
ներ, դանձապահներ, ավազ վերա-
հրակիչներ և այլն) սահմանված և
աշխատավորների միջին նաև նվա-

ղաղուն և առավելագույն դրույթ-
ներ, վորոնք կարող են հաստատվել
այդ պաշտոններն ունեցող աշխա-
տողների համար: Գյուղական տո-
րին խնայողական դրամարկղների
այն աշխատողները, վորոնց աշխա-
տանքը կապված է փոխառության և
ավանդների պլանի կատարման հետ
(վերահսկիչներ, դանձապահներ և
այլն), բացի հիմնական աշխատա-
վարձից, ստանում են յեռամսյակում
մեկ անգամ պարգևատրում խրախուսա-
կան վարձատրություն՝ պլանը կա-
տարելու և ղեկավարելու համար:

Յուրաքանչյուր խնայողական դը-
րամարկղում պետք է լինի կինը:
Կենտրոնական և շրջանային խնայո-
ղական դրամարկղները և առաջին
կարգի դրամարկղներն ունեն կնո-
րի: ԽՍՀ Միության գերբով, յերկրորդ
կարգի խնայողական դրամարկղնե-

րը և գործակալությունները — յե-
ռանկյունաձև կնիք՝ առանց գերբի:
Խնայողական դրամարկղի ցուցա-
նակը պետք է խափվ համապատաս-
խան լինի Գլխավոր վարչության
կողմից սահմանված որինակին այն
բանի համար, վորպեսզի խնայողա-
կան դրամարկղերը կարելի լինի
միանգամից տարբերել ցանկացած
քաղաքում և գյուղում: Ցուցանակն
վրա նկարված է ԽՍՀՄ-ի պետական
դերբով: Ցուցանակի տեքստը՝ «ԽՍՀ
Միության Ֆինանսների Ժողովրդ-
ական Կոմիսարիատ: Պետական
աշխատավորական խնայողական
դրամարկղի №...» — պետք է
գրված լինի կանաչ տարածություն
վրա՝ արծաթագույն տառերով:
Ընդամենը՝ տառերի ձևերը և տեքստի
տեղավորումը սահմանվում են
ստանդարտ որինակով:

5. ԱՎԱՆԳՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Դրամական միջոցները խնայողա-
կան դրամարկղները ներգրավում են
ԽՍՀ Միության Ժողովրդական տրն-
տեսություն պլանով՝ նախատեսված
նպատակների համար: Այն միջոցնե-
րի ծավալը, վորոնք պետք է վորպես
ավանդ ներգրավեն խնայողական
դրամարկղների ամբողջ սիստեմն
ամբողջությամբ և այդ սիստեմի
յուրաքանչյուր ողակն՝ ստանձին՝
սահմանվում է պլանով:

Ավանդների ներգրավման պլանը
կազմվում է, յերևելով հաշվառու և
պլանավորող ժամանակաշրջանների
Ժողովրդա-տնտեսական մի չափ
ցուցանիշներից — բանվորների և ծա-
ռայողների աշխատավարձի ֆոնդը,
կուլտեսակների յեկամությունները,
ուղղաքաղընտրություններ և այլն:
Դրա հետ միասին, պլանը կազմելիս
հաշվի յեն տնվում խնայողական
դրամարկղները կազմակերպչորեն
ամբողջելու, նրանց կուլտուրական
տեսք տալու, ցանցը զարգացնելու,

աշխատակիցների վորակավորումը
բարձրացնելու միջոցառումները, ինչ-
պես և անցած ժամանակի ընթաց-
քում ձեռք բերած արդյունքները
(ավանդատուների թիվը և ներգրավ-
ված ավանդների մեծությունը, նրանց
ածր վերջին ժամանակների ընթաց-
քում, ավանդների միջին չափը և
այլն):

Ավանդների ներգրավման պլանը
կատարելիս՝ յեռական նշանակու-
թյուն ունեն մասսայական-բացա-
տրական աշխատանքների դրվածքն
աշխատավորների մեջ և ավանդա-
տուների սպասարկելու վորակը:
Խնայողական գործի նշանակություն,
խնայողական դրղների կողմից իրենց
ավանդատուներին տրվող հարմարու-
թյունների ողուտների շնորհիվ
պարգարանումը մասսաների մեջ,
ցանցի ձիւտ դասավորումը, գործառ-
նությունների արագ ու հստակ կա-
տարումը, ուշադիր վերաբերմունքը
գեպի ավանդատուները — ահա պլանը

*) Վերևում բերված տեղեկություններն
այն ավանդների միջին դուռնակի մասին
են, վորոնք ներգրավված են յուրաքանչյուր
տիպի խնայողական դրամարկղների կողմից:
Դեռ և ներկայումս էլ, սակայն, կան դա-
նազան տիպի հետամնաց, վատ աշխատող
բազմաթիվ խնայողական դրամարկղներ:
Նման դրամարկղներում, ճնայած խնայո-
ղությունների ներգրավման համար յեղած
բարենպաստ պայմանների, ավանդների մե-
նացողը ցածր է:

Հաջող կերպով կատարելու գրավա-
կանը:

Հասարակական կազմակերպություն
ները մասնակցությունն ավանդները
ներգրավելու մասնաշաղկապն աշխա-
տանքներում — պլանը հաջող կերպով
կատարելու կարևոր նախադրյալն է:
Սակայն միանգամայն անթույլատրե-
լի չէ հասարակական կազմակերպու-
թյուններին ավանդների ներգրավման
հսկիչ առաջադրանքներ տալը, վո-
րովհետև այդ կարող է առաջ բերել
ավանդների կամավորություն չունե-
լու ռիսկի խախտում:

Ավանդների ներգրավման պլանը
տրվում է միայն խնայողական դրա-
մարկղներին: Այն կազմվում է քաղա-
քային և գյուղական խնայողական
դրամարկղների համար առանձին-ա-
ռանձին:

Տարեկան պլանը յուրաքանչյուր
քաղաքի և շրջանի խնայողական
դրամարկղների համար սահմանվում
է պետական աշխատավորական խնա-
յողական դրամարկղների և պետա-
կան վարկի վարչությունը, յեղնելով
հանրապետության, յերկրի, մարզի
պլանից ամբողջությամբ առած, վո-
րեն իր հերթին վորոշվում է և խնա-
յողական դրամարկղների ամբողջ
սխտեմի համար կատարվող յայն
կողմից սահմանված պլանի հիման
վրա:

Ի դարգացումն տարեկան պլանի՝
կենտրոնական և շրջանային խնայո-
ղական դրամարկղներն ավանդների
ներգրավման պլանը վարչություննե-
րից ստանում են տարեկան յուրա-
քանչյուր յետամոյակի համար: Յե-
սամոյակային պլանի հիման վրա՝
ներանք պլան են սահմանում իրենց
քաղաքի կամ շրջանի բոլոր խնայո-
ղական դրամարկղների համար:
Ընդամին՝ ուշագրություն են առ-
նվում յուրաքանչյուր խնայողական
դրամարկղի աշխատանքների ար-
դյունքներն անցած ժամանակի ըն-
թացքում (ավանդների մնացորդներն
ու աճը, ավանդատուների թիվը):

Ստորին խնայողական դրամարկղի
համար պլան սահմանելիս՝ անհրա-
ժեշտ է հաշվի առնել նրա ավանդնե-
րը ներգրավելու համար նրա մոտ
յեղած հնարավորությունները — տվյալ
խնայողական դրամարկղի կողմից
սպասարկվող տնտեսությունների թի-
վը, բնակչության յեկամությունը,
դրամարկղի տեղը, նրա աշխատանքի
ժամերը և այլն, նաև խնայողական
դրամարկղի աշխատանքները բարե-
լավելու համար անցկացվող միջո-
ցառումները (ներառնելով վերանորո-
գումն ու վերակահավորումը, աշ-
խատակիցների վորակը բարձրացնելը
և այլն):

Շրջանի խնայողական դրամարկղ-
ներից յուրաքանչյուրի համար ա-
վանդների ներգրավման պլան կազ-
մելը պետք է կատարվի մտածված
և մանրամասն ձևով: Այն պահան-
ջում է շրջանի բոլոր խնայողական
դրամարկղների աշխատանքների տե-
ղական պայմանների յավ յմանալը:
Ձի կարելի թույլ տալ աշխատի
դրություն, յերբ մի խնայողական
դրամարկղի համար կամայականորեն
սահմանվում է չափազանց մեծ
պլան, այն ժամանակ, յերբ մյուսի
պլանը, վորը մեծ հնարավորու-
թյուններ ունի ավանդները ներգրա-
վելու համար, չափազանց փոքրաց-
վում է:

Գործառնություն մասի և ստորին
խնայողական դրամարկղների համար
սահմանված յեռամոյակային պլան-
ների գումարը պետք է յատկորեն հա-
մապատասխանի շրջանի կամ քաղա-
քի համար վարչության կողմից
սահմանված պլանին՝ ամբողջու-
թյամբ վերցրած: Կենտրոնական
կամ շրջանային խնայողական դրա-
մարկղներն իրավունք չունեն իրենց
ստացած պլանը մեծացնելու կամ
փոքրացնելու:

Սակայն անհրաժեշտ է նկատի ու-
նենալ, վոր շրջանի խնայողական
դրամարկղների համար սահմանվող
ավանդների առաջադրանքները, քաղ-

մաթիվ դեպքերում, հաշվի չեն առ-
նում խնայողությունները ներգրա-
վելու բոլոր հնարավորությունները:
Այդ պատճառով՝ յավ աշխատելու
դեպքում՝ այդ առաջադրանքները
պետք է անսլաքման յգալիորեն դե-
րակատարվեն:

Կենտրոնական կամ շրջանային
խնայողական դրամարկղը պետք է
մշտապես հետևի պլանը կատարելու
ընթացքին, պարզի այն պատճառնե-

րը, վորոնց հետևանքով այս կամ
այն դրամարկղը չի կատարում պլա-
նը և ձևանարկի աշխատի միջոցներ,
վորով ապահովեն պլանի վոչ միայն
կատարումը, այլև գերակատարումը:
Ընդամին՝ անհրաժեշտ է մնալական
պայքար մղել յնչպես աչքակապու-
թյան, այնպես էլ պլանը կատարելու
նպատակով ավանդների կամավո-
րություն սկզբունքը յախտող բոլոր
փորձերի դեմ:

6. ԱՎԱՆԴՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ — ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՔՆ Ե

Ավանդների ներգրավման մասա-
յական — բացատրական աշխատանք-
ների նպատակը հանգում է այն բա-
նին, վորպեսզի բոլոր աշխատավո-
րներն պարզաբանի յորհրդային
խնայողական դրամարկղների դերն
ու նշանակությունը, այն ուղւտներն
ու հարմարությունները, վորպիսիք
տալիս են նրանք իրենց ավանդա-
տուներին և դանադան գործառնու-
թյունների կատարման կարգը:

Մասսայական — բացատրական աշ-
խատանք կատարելով, խնայողական
դրամարկղներն ավանդատուների
թվում ներգրավում են այն աշխա-
տավորներին, վորոնք իրենց խնայո-
ղությունները նախկիններում չեն
պահել վորպես ավանդ:

Սակայն, սխալ կլինի կարծել,
վոր մասսայական — բացատրական
աշխատանք պետք է տանել միայն
ավանդատու հանդիսացող աշխա-
տավորների մեջ: Խնայողական դրա-
մարկղի գործառնությունների հետ
պետք է մանրամասնորեն ծանոթաց-
նել նրանց, յվքեր իրենց միջոցներն
արդեն պահում են այնտեղ:

Հասկանալի չէ, վոր մասսայա-
կան — բացատրական աշխատանքները
վոչ մի դեպքում չեն կարող սահ-
մանափակվել միմիայն խնայողական
դրամարկղների գործառնություննե-
րի մասին տեղեկություններ տալով:
Նա պետք է պայծառ կերպով լու-

սաբանի այն յնդիքները, վորպիսիք
կատարում են խնայողական դրա-
մարկղները՝ ժողովրդական խնայո-
ղությունները տնտեսական և կուլ-
տուրական շինարարություն, աշխա-
տավորների բարեկեցություն և կուլ-
տուրայի հետագա վերելքի գործի
համար ներգրավելու դժուր:

Մասսայական — բացատրական աշ-
խատանքների հիմնական սկզբունքը
հանդիսանում է ավանդների կամա-
վորություն յատկապես ավանդների
խնայողական դրամարկղի յուրա-
քանչյուր աշխատող և յուրաքան-
չյուր ակտիվիստ — հասարակորդ պետք
է յուրացնեն, վոր այդ սկզբունքի
ամենափոքր յախտումն անգամ քա-
ղաքականապես վնասակար է և վոչ
միայն չի նպաստում խնայողու-
թյունները ներգրավելուն, այլ,
ընդհակառակը, վարկաբեկում է յնա
յողական գործը բնակչության աչ-
քում: Առանձին շրջաններում տեղի
ունեցած ավանդների կամավորու-
թյան յախտումը, որինակ, կուլ-
տնտեսականների յեկամությունների
կամ շատ յերեխաներ ունեցող մայ-
րերին տրվող նպատանքի հաշվե-
դրելն ավանդներում, առանց նրանց
համաձայնություն, յնչպես և այլ
յեղաթյուրումները, մի շարք դեպ-
քերում, անկասկած, հանդիսանում
է յին խնայողական դրամարկղների

ապարատը խցկված ժողովրդի թշնամիներն ինքնաբերական արդյունքը:

Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունը անցկացնելով մասնաշաղկապներ, բացատրական աշխատանքներ, խնայողական դրամարկղներն այդ աշխատանքներում հիմնվում են հասարակայնության վրա, պետական վարկին և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովներին վրա, քաղաքային և դոլարական խորհուրդներին՝ Ֆինանսական սեկցիաներին վրա, սրբափառ թեմական ակտիվի վրա և այլն:

Ակտիվիստ-հասարակորդները կատարելով բացատրական աշխատանք, իրավունք չունեն ավանդներ ընդունելու: Այդ իրավունքը վերապահված է միմիայն խնայողական դրամարկղներին: Վորեկ լիազորները կամ «հավաքագործներ» անսահմանափակ ափանդների ընդունման համար, կրտսերականապես արգելված է: Այդ կատարված է այն բանի հետ, վոր ամառները լիազորներին միջոցով ներգրավելիս՝ չի ապահովվում ավանդատուներին ճշտորեն ապաստարկելը և սոցիալիստական սեկցիանությունների անվթարությունը:

Վճարահանապես պետք է դատապարտվեն աշխատանքի այնպիսի «մեթոդները», վորոնց ժամանակ փառաբան խախտվում է ավանդների կամավորությունը, կամ պայմաններն են սահմանվում նրա խախտման համար: Ահա թե ինչու համար արգելվում է աշխատավորների ժողովներում կայացնել այնպիսի վորոշումներ, վորոնք պարտավորեցնում են կոլեկտիվին անդամներին՝ վորոշ պումար մեծ աշխատավարձի մի մասը մուծել խնայողական դրամարկղ: Ձի կարելի նաև կազմել խնայողական դրամարկղ դրամ մուծելու ցանկություն ունեցողների ցուցակ, անել այնպես, վոր աշխատավորներն ավանդն անպայման մուծեն վորոշ ժամկետով և այլն: Ձի թույլատրելի

վում նույնպես բանվորների և ծառայողների աշխատավարձն ու կուտակված փողերը փոխանցել վորպես ավանդ:

Մասնաշաղկապներ - բացատրական միջոցառումներից մեկն էլ, վորը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը կարող է իրագործել, հանդիսանում է խնայողական դրամարկղների գործառնությունների մասին թերթիկներ և աֆիշաներ հրատարակելը: Այդ թերթիկներում և աֆիշաներում կարող են շարադրվել հիմնական տեղեկություններ խնայողական դրամարկղների խնդիրների մասին, նրանց կողմից կատարվող գործառնությունների մասին, դրամարկղները դադարեցնելու տեղի և աշխատանքի ժամանակի մասին, ավանդատուներին վերադարձվող իրավունքների մասին: Շրջանային խնայողական դրամարկղների կողմից հրատարակվող թերթիկները, ինչպես և խնայողական դրամարկղների վարչությունների կողմից հրատարակվող տեղեկատուներն ու գրքուկները տարածվում են աշխատավորության մեջ ոժանդակող հանձնաժողովների և մյուս հասարակական կազմակերպությունների միջոցով, նաև անմիջականորեն բաժանվում են խնայողական դրամարկղների այցելուներին (պետական փոխառությունների պարտատուներին, շահումներ ստացողներին, ակկրեդիտիվ ունեցողներին և այլն):

Ինչ վերաբերում է աֆիշաներին և վարչությունների կողմից հրատարակվող պրակատներին, ապա այդ պրակատները պետք է կախել հասարակական հիմնարկություններում, կուտակության տեղում, խրճիթ-ընթերցարաններում և այլն:

Խնայողական գործի ժողովրդականացման համար կարևոր նշանակություն ունի ավանդների մասին բնակչության ինֆորմացիա տալը

ապրիլի միջոցով: Նման ինֆորմացիա կարելի չէ կազմակերպել վոր միայն հանրապետական կամ մարզային կենտրոնից, այլև տեղում: Դրա համար պետք է ոգտագործել շրջաններում յեղած ուղիի հանդույցները:

Խնայողական դրամարկղներին ավանդներ տալը ժողովրդականացնելու համար կինոյի եկրանի վրա պետք է ոգտագործվեն խնայողական դրամարկղների մի քանի վարչությունների կողմից բաց թողնվող կինոնկարներ: Դրա հետ միասին, պետք է, ըստ հնարավորության, կազմակերպել կինոթատոններում տեքստային կինոկադրերի ցույց՝ ավանդների մասին յեղած ինֆորմացիոն տեղեկություններով:

Խնայողական դրամարկղների համար առանձնապես մեծ դեր է խաղում նրանց աշխատանքների հարցերը լուսարանում տեղական մամուլում: Շրջանային թերթերում, գործարանային բաղատիրաժկաներում, պատի թերթերում, աշխատավորների խնայողությունների աճման և նոր խնայողական դրամարկղներ բացելու մասին յեղած տեղեկություններով հոգվածներ և դիտողություններ ղեկավարելը նպաստում է ավանդների ներգրավմանը: Նպատակահարմար

մար է նաև հայտարարություններ տալ թերթերում խնայողական դրամարկղների գործառնության մասին:

Խնայողական դրամարկղների աշխատողները պետք է բանվորների, կուտակականներին, ծառայողներին և այլոց ժողովներում սխտեմատիկորեն կազմակերպեն ղեկուցումներ և ղույցներ՝ խնայողական դրամարկղների մասին: Այդ ղեկուցումներում պետք է ունկնդիրներին բացատրել ժողովրդական խնայողությունների ղերը սոցիալիստական շինարարությանը Ֆինանսավորելու գործում, ավանդատուներին տրվող իրավունքները՝ գործառնությունները կատարելու կարգը խնայողական դրամարկղներում և այլն:

Շատ ոգտակար է հանդիսանում խնայողական դրամարկղների գործառնությունների, նրանց հասցեների և աշխատանքի ժամերի մասին բնակչությանը տեղեկություն տվող ռեկլամը փողոցներում, հրապարակներում, կինոներում, թատրոններում, ակումբներում և այլն: Խնայողական դրամարկղների շենքերում հարկավոր է կախել բլանկները լրացնելու օրինակներ, կտակային կարգադրությունների հավատարմագրերի և այլնի օրինակելի տեքստեր:

7. ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Աշխատավորների խնայողությունները ներգավելու խնդիրները խնայողական դրամարկղների կողմից հաջող կատարելու համար, վճարահան նշանակություն ունի ավանդատուների ապաստարկման ճշգրիտ գրվածքը: Կուլտուրական խնայողական դրամարկղ կարող է անվանվել միայն այնպիսի դրամարկղը, վորը վոր միայն կուլտուրական տեքստերի իր շենքին, մաքրություն և պահպանում այնտեղ և այլն, այլև

օրինակելիորեն է դրել հաճախորդներին ապաստարկելու ամբողջ աշխատանքը:

Մեծ դեր է խաղում խնայողական դրամարկղների ցանցի ճիշտ տեղավորումը յուրաքանչյուր քաղաքում և գյուղում: Յերբեմի խնայողական դրամարկղը բարենպաստ հնարավորությունները չի ոգտագործում ավանդների ներգրավման համար հենց այն պատճառով, վոր նա անհաջող է տեղավորված (օրինակ՝ խոշոր

կողտնտեսություններին հետու կամ
քաղաքի քիչ բնակված տեղում) :

Շատ կարեւոր է նաև ճշտորեն սահմանել յուրաքանչյուր խնայողական դրամարկիւի աշխատանքի ժամերը, նա պետք է բաց լինի աշխատի ժամերին, յերբ աշխատավորներին հարմար է աշխտեղ այցեքէլը : Այդ պատճառով յուրաքանչյուր քաղաքում պետք է լինեն յերեկոներն, բնդհանուր հանգստյան օրերին աշխատող խնայողական դրամարկիւներ : Խնայողական դրամարկիւները աշխատանքի ժամերը պետք է սահմանվեն այն հաշվով, վորպեսզի չըջանային կենտրոն յեկող գյուղացիները (չուկա, խանութներում ապրանքներ գնելու համար, և այլն), կարողանան օգտվել նրանց ծառայութիւններից :

Ստորին խնայողական դրամարկդ-
ների աշխատանքի ժամերը կենտրո-
նական կամ չըջանալին դրամարկդը
վերջում և նախապես պարզելով
խորհուրդներ, պրոֆմիտթեռական
և այլ կազմակերպութունների ցան-
կութուններն այդ հարցի տոթիւմ:
Իսկ կենտրոնական կամ չըջանալին
խնայողական դրամարկդի աշխա-
տանքի ժամերը սահմանում և խնու-
յողական դրամարկդների վարչու-
թյունը, ընդամին հաշիւի առնելով
քաղաքային խորհրդի, կամ չըջա-
նալին գործադիր կոմիտեի յեզրա-
կացութունը:

Հատուկ ուշադրութիւն պետք է
դարձնուի դրամական փաստաթղթերը
ճշտորեն լրացնելու և պահպանելու
վրա (խնայողական գրքույկներ,
ակկրեդիտիվներ, փոխադրումներ,
ավանդատուների անձնական հաշիվ-
ներ, որդեկներ և այլն)։ Յուրաքան-
չյուր ուղղում— այն փաստաթղթե-
րում, վորտեղ առհասարակ թույլա-
տրուում են ուղղումներ, պետք է
արվի կարծիք թանաքով։ Այդ ուղ-
ղումները պետք է ծանոթագրված
և ստորագրված լինի այն աշխա-

տակելի կողմից, վորն արել ե ուղղումը, իսկ անձնական հաշվում արված դրանցումներն ուղղելու ժամանակ, բացի այդ, նաև խնայողական դրամարկղի վարելի կողմից: Ձի կարելի մոռանալ, վոր վորեն փաստաթղթերի լրացման մեջ յեղած ամենափոքր անճշտությունը, սխալ ձևակերպված ուղղումն այդ փաստաթղթերում կարող ե առաջ բերել ալանդատույի իրավունքների լուրջ խախտում: Դրամական փաստաթղթերը ձևակերպելու մեջ յեղած անճշտություններով կարող են նույնպես ուղտվել խնայողամարկղի արտարատը խցկված ժուլիկներ, սոցիալիստական սեփականությունը հափշտակելու համար:

Խնայողական դրամարկղը պետք է մշտապես ապահովված լինի դրամարկղային կանխիկով, վորովհետեւ նա պարտավոր է դրամ տալ ավանդատուին՝ առաջին պահանջով։ Խնայողական դրամարկղներն աշխատողները դատական պատասխանատվություն են կրում դրամն ավանդատուներին տալը ձեռնարկում համար։ Կենտրոնական կամ չրջանային խնայողական դրամարկղները պարտավոր են սահմանել ստորին խնայողամարկղները՝ դրամական կանխիկով մատակարարելու աշխատակարգ, վորի ժամանակ ավանդի տալը ձեռնարկում հնարավորությունը բացառված լինի։

Ավանդատուների սպասարկումը
ճիշտ կազմակերպելու և ավանդների
ներգրավման պլանը կառարկելու
համար, խոշորագույն դեր է խա-
ղում խնայողական գրամարկդների
աշխատողների ճիշտ ընտրությունը
և խնայողական գրամարկդների ա-
ճած աշխատողներին առաջ քաշելը։
Խնայողական գրամարկդի դեկամարը
սկեսը է մանրադնին սուուդի յուրա-
քանչյուր աշխատողին, սարգի, թե-
նա վաչելում է արդյոք քաղաքական
վտանգություն և թե ունի արդյոք
բավականաչափ պատրաստականու-

Թժյուն իրեն հանձնվող աշխատանքները կատարելու համար: Աշխատողներին ընտրությունը պետք է տեղի ունենա «առաջին՝ ըստ քաղաքական հատկանիշի, այսինքն՝ վաշելում են արդյոք նրանք քաղաքական վստահություն և յերկրորդ՝ ըստ գործնական հատկանիշի, այսինքն՝ պետքական են արդյոք նրանք աշխնհկոնկրետ աշխատանքի համար» (Ստալին: Յեղբարեական խոսք ՀԱՄԿ (Բ)Կ Կենտկոմի պլենումում 3—5 մարտի, 1937 թ.):

Վրոչ մի աշխատակցի չի թուլա-
տրվում զործառնությունների աշ-
խատանքներ կատարելու, մինչև վո-
րա քննություն չտա, վորով ցույց ե
տալու, թե վորքան նա դիտի դո-
ծառնությունների որեւնքներն ու
հրահանգները: Պետք է նաև սխտե-
մատիկ աշխատանք կազմակերպվի
բոլոր աշխատակիցների վորակը հե-
տադալում բարձրացնելու համար:
Ընդամին՝ բավական չե բարձրաց-
նել միայն տեխնիկական վորակը:
Յուրաքանչյուր աշխատողի առաջ
խնդիր է դրված տիրապետել բոլ-
չևիդմին և հասկանալ իր աշխատան-
քի քաղաքական իմաստը:

Խնայողական դրամարկիլի ղեկավարը պետք է ապահովի աշխատավորների կողմից արված բողոքների և զերիտումների մանրադննդին և ժամանակին քննումը։ Բողոքը լուրջ ահազանդ է թեկույթյունների մասին, իսկ չերեմն էլ խնայողական դրամարկիլի աշխատանքներում յեղած քաղաքական լուրջ սխալների մասին։ Բավական չէ բողոքին պատասխանելը, այն ամիող քաղաքացուն բավարարելը—պետք է նույնպես պարզիլ այն պատճառները, վորոնք ղեկզույթյուն են առաջացնում ավանդատուների մեջ և վերացնել այդ պատճառները։

Ավանդատուների ճիշտ ապաստարկման և բնակչության ավանդների ներգրավման դործում մճռական զեր

և խաղում խնայողական դրամարկւղներին աշխատողներին սոցիալիստական մրցումը: Բազմաթիւ խնայողական դրամարկւղներում սոցիալիստական մրցումը դեռուս չի դարձել պլանը կատարելու և գերազատարելու համար մղվող պայքարի հիմնական մեթոդը: Սոցիալիստական պարտավորութւոյունները, վորպիսինքն աշխատավորները վերջնում են իրենց վրա, հաճախ կոնկրետ չեն լինում, սոցպարտավորութւոյունների կատարման սխտեմատիկ ստուգումը կարգի չի բերված: Սակայն, դրա հետ միասին, խնայողական դրամարկւղներում կան շատ այնպիսի աշխատողներ, վորոնք սոցմրցման հիման վրա հասել են աշխատանքի բարձր վորակի, դարձել են իսկական գերադանցիկներ:

Ինչո՞վ է բնորոշվում զերադան-
ցիկի աշխատանքը։ Ինչպիսի ցուցա-
նիշների պետք է հասնել սոցիալիս-
տական մրցություն կազմակերպե-
լու միջոցով։ Գերազանց աշխատան-
քի որինակելի ցուցանիշները սահ-
մանել են խնայողական զբաղակղ-
ների Գլխավոր Վարչությունը՝ Ֆին
րանկային աշխատողների Միության
կվ-ի հետ միասին խնայողական
զբաղակղների աշխատողների յու-
րաբանչյուր առանձին կատեգորիայի
համար։ Այդպես, որինակ՝ խնայ-
զբաղակղի վերահսկիչը, վորպես-
զի զերադանցիկ դառնա, պետք է
հասնի բնակչության միջոցների
ներգրավման պլանին իր խնայողա-
կան զբաղակղի կողմից ամսե ամիս
զերակատարելուն։ Նա պետք է ու-
րիշակելի ձևով կազմակերպի աշ-
խատավորների սպասարկումը, գոր-
ծառնությունների կատարման ժա-
մանակ չանել վորեւ սխալ, հասնել
իր աշխատանքի բարձր արտադրո-
ղականության։

Վերահսկչի գերազանց աշխատանքի ցուցանիշների թվում մտնում է նույնպես խնայողամարկղում պահ-

վող ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի Դեպոյի պարտատոմսերի ժամանակին և ճիշտ կառավարումը, ձեռնարկում և, վերջապես, իր քաղաքական մակարդակը և գործարար վորակը բարձրացնելու համար սխառմատիկորեն աշխատելը և տեխնիկական ընդունակությունները «գերազանց» զնահատականով տալը: Այդ իսկ կարող էին սահմանված գերազանց աշխատանքի ցուցանիշները խնայողական դրամարկիցները վարչիշները, գլխավոր հաշվապահների, տեսուչների և այլոց համար:

Վորպեսզի բարձրացնել խնայողական դրամարկիցները աշխատանքի վորակը և ապահովել աշխատավորների խնայողությունների ներգրավմանն պլանի գերակատարումն այդ խնայողականների կողմից, անհրաժեշտ և բարելավել սոցիալական տեղանքի մրցման կազմակերպումը,

8. ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԱՎԱՆԴՆԵՐԸ ՏՆՈՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Ամեն մի քաղաքացի կարող է լինել խնայողական դրամարկիցի տվանդատու: Նա իրավունք ունի նաև, յեթե ցանկանում է, լինել միաժամանակ մի քանի խնայողական դրամարկիցների ավանդատու, կամ մի քանի հաշիվներ ունենալ մի դրամարկիցում:

Ավանդի գումարի համար վոչ մի սահման գոյություն չունի—ավանդատուն կարող է իր հաշիվում պահել ցանկացած գումար: Ընդամենը, սակայն, ավանդի մնացորդը յուրաքանչյուր գործառնությունից հետո պետք է 5 ուրբուց պակաս չլինի: Այն դեպքերում, յերբ գործառնությունից հետո հաշիվում մնում է 5 ուրբուց պակաս, խնայողական դրամարկիցն առաջարկում է ավանդատուին լրացնել ավանդը կամ

հառնել այն բանին, վորպեսզի այդ գործին մասնակցել յուրաքանչյուր խնայողական դրամարկիցի աշխատողները կողմնակալը, բազմացնել գերազանցիկները թիվը, լայնորեն կազմակերպել մրցումը խնայողական դրամարկիցների միջև և սխառմատիկորեն ստուգել պայմանագրերի և սոցիալիստական պարտավորությունների կատարումը:

Խնայողական դրամարկիցների աշխատանքների բարելավման գործում մեծ ոգնություն կարող են ցույց տալ տեղական խորհուրդները: Խնայողական դրամարկիցի աշխատողները պետք է սխառմատիկորեն հաշիվ տան չրջգործկոմներին, քաղաքային և գյուղական խորհուրդներին և տեղեկացնեն նրանց խնայողական գործը բարելավելու համար նախատեսվող միջոցառումները մասին:

առձեռն ստանալ նրա ամբողջ մնացորդը: Սկզբնական մուծման ամենափոքր գումարը նույնպես կազմում է 5 ուրբլի:

Այն ժամանակը, վորի ընթացքում ավանդը կարող է պահել խնայողական դրամարկիցում, վոչ չեն չով չի սահմանափակված: Ավանդը հետ պահանջելու համար վոչ մի սահմանված ժամկետ գոյություն չունի: Այդ նշանակում է, վոր ավանդատուն իրավունք ունի իր դրամն ստանալ հենց առաջին պահանջով, յերբ ցանկանում է, նույնիսկ, որինակ՝ մուծման օրը, կամ թե՛ 10-15 տարի հետ: Այստեղից բխում է այն, վոր ավանդների բոլոր արդարացուցիչ փաստաթղթերը խնայողական դրամար-

կիցները պարտավոր են պահել անժամկետ կերպով:

Յուրաքանչյուր քաղաքացի կարող է ավանդ տալ վոչ միայն իր անունով, այլև ուրիշ անձի անունով: Սակայն խնայողական դրամարկիցից հիմնարկություններից, ձեռնարկություններից, կոլտոեխություններից և մյուս կազմակերպություններից չեն ընդունում բանվորների և ծառայողների աշխատավարձի և կոլտոեխությունների կողմից կոլտոեխականների մեջ բաշխվող յեկամուտների գումարներն առանձին քաղաքացիների ավանդներում հաշիվներում համար:

Խնայողական դրամարկիցների աշխատանքները կառուցված են տրենդով սահմանված հիմնական սկզբունքների վրա: Այդ օրենքը կոչվում է՝ «Որենագրություն պետական աշխատավորական խնայողական դրամարկիցների մասին», վորը հաստատված է ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի և ՖԿԽ-ի կողմից՝ 1929 թ. փետրվարի 20-ին: Համաձայն այդ օրենագրության՝ խնայողական դրամարկիցների ավանդատուներին վերապահվում են զգալի իրավունքներ և արտոնություններ:

Խորհրդային Միության Կառավարությունը յերաշխարկում է ավանդատուներին իրենց ավանդների անվթարությունը: Ավանդի նկատմամբ ունեցած իրանց իրավունքներն ավանդատուները պահպանում են ամբողջությամբ՝ նույնիսկ խնայողական դրամարկիցից յեղած հրեհի, գողության և այլ դեպքերում: Խնայողական դրամարկիցների աշխատողները պարտավոր են քրեական պատասխանատվություն անհից գրոված՝ պահպանել ավանդների գաղտնիքը: Նրանք իրավունք չունեն հայտնելու վորևէ մեկին, թե՛ ավյալ անձնավորությունը խնայողական դրամարկիցում ավանդատու յե արդյո՞ք: Ավանդ-

ների մասին տեղեկանքներ կարող են տրվել միայն իրեն՝ ավանդատուին, կամ նրա հավատարմատունին: Դատական և քննչական մարմիններին տեղեկանքներ ավանդատուներին և նրանց ավանդների մասին տրվում են միայն քրեական գործերում: Դատական կամ քննչական մարմնի՝ նման տեղեկանք տալու մասին յեղած դրավոր պահանջում պետք է անպայման մատնանշված լինի, վոր տեղեկանքը պահանջվում է քրեական գործով: Տեղեկանքներ ավանդատուների և նրանց ավանդների մասին քաղաքացիական գործերում չեն տրվում:

Ավանդատուներին ապահովվում է ավանդների անձեռնամխելիությունը: Այդ նշանակում է, վոր ավանդները չեն կարող յենթարկվել կաշանքի այլ կերպ, քան դատական կամ քննչական մարմնի վորոշման հիման վրա և այն ել միայն քրեական գործով: Տալ, կամ փոխանցել ավանդն ավանդատուին հաշիվից՝ առանց նրա կարգադրության, խնայողական դրամարկից կարող է միայն դատարանի՝ որինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, վորը հանվել է քրեական գործով, կամ կատարողական թերթի հիման վրա, վորը տրվել է դատական վճռով՝ ըստ քրեական գործից բխող հայցի:

Շատ եյական է հանդիսանում ավանդատուին իրավունքը՝ ավանդից յեկամուտ ստանալու նկատմամբ: Այդ յեկամուտը խնայողական դրամարկիցները վճարում են առանձին քաղաքացիների ավանդների համար՝ տարեկան 3 տոկոսի հաշիվից: Յերկրորդ հնգամյակի տարիների ընթացքում (1933-1937) խնայողական դրամարկիցները վճարել են բնակչությանը, վորպես տոկոսներ ավանդների համար, մոտ 600 միլիոն ուրբլի: Տոկոսների գումարը միայն 1937 թվականի համար կազ-

մում է մոտ 120 միլիոն ուրբի:

Խնայողական դրամարկղները ա-
վանդատուններին վերապահվում են
արտոնություններ՝ հարկերի դժով:
Այդ արտոնությունները կայանում է
ներանում, վոր ավանդները և ա-
վանդներից ստացվող յեկամու-
ները վոչ մի կերպ չեն հարկվում:
Ժառանգելու կարգով (նույն թվում
և կտակային) կարգադրությունների
հիման վրա ուրիշ անձանց անցնող
ավանդներն ազատվում են ժա-
ռանգելու կամ նվիրաբերելու կար-
գով անցնող գույքի համար սահ-
մանված հարկից:

Յուրաքանչյուր ավանդատու ի-
րավունք ունի ցանկացած ժամանակ
ազատ կերպով տնորինելու իր ա-
վանդը:

Անչափահաս ավանդատուն կարող
է ինքնուրույն կերպով տնորինել
ավանդն այն դեպքում, յեթե այդ
ավանդն ինքն է մուծել: Մնացած
դեպքերում՝ 14 տարեկանից պակաս
անչափահասի ավանդը տնորինում
են ծնողները (յերկուսը միասին)
կամ խնամակալը և այն ել միայն
խնամակալական և խնամատարական
մարմինների թույլատվությամբ:
Իսկ յեթե անչափահասը 14 տարե-
կանից մեծ է, ապա ավանդը տնո-
րինում է նա ինքը, բայց յերկու
ծնողների գրավոր թույլտվությամբ
կամ խնամատարի թույլտվու-
թյամբ:

Խնամակալության տակ գտնվող
չափահասների ավանդները տնորին-
ում են խնամակալները, իսկ խնա-
մատարության տակ գտնվող չափա-
հասների ավանդները իրենք ավան-
դատունները՝ խնամատարների համա-
ձայնությամբ: Այդ յերկու դեպքե-
րումն էլ՝ ավանդն տոանալու հա-
մար պահանջվում է խնամակալու-
թյան և խնամատարության մարմնի
թույլտվությունը:

Անհրաժեշտ է կանգ առնել ար-
տասահմանում գտնվող խորհրդային

քաղաքացիների ավանդները և ոտար-
յերկրացիների ավանդները տնորին-
ելու կարգի մի քանի առանձնա-
հատկությունների վրա:

Յեթե ավանդատուն—խորհրդային
քաղաքացին—գտնվում է խորհրդա-
յին մշտական աշխատանքի մեջ ար-
տասահմանում կամ ժամանակավո-
րապես գործուղվում է արտասահ-
ման մի վորեւ խորհրդային կազ-
մակերպության կողմից, նա իրա-
վունք ունի իր ավանդն ազատ կեր-
պով տնորինել արտասահմանից:
Այդպիսի ավանդատուն կարող է ա-
վանդն ստանալու համար չեկ կամ
հավատարմագիր տալ խորհրդային
Միության մեջ գտնվող իր ազգա-
կանին կամ ծանոթին, կամ թե հրա-
ման տալ խնայողական դրամարկղին
փոխանցելու ավանդն ուրիշ ավան-
դատույի հաշվին:

Նման ավանդատույի ավանդը,
մինչ նրա խՍՀՄ վերադառնալը, կա-
րող են յրացնել, սակայն միայն
խորհրդային կազմակերպություննե-
րը: Այդ ավանդատուների հաշվինե-
րում ավանդներ ընդունելը վորեւ
մեկից, բացի խորհրդային կազմա-
կերպություններից, չի թույլատրե-
վում խնայողական դրամարկղներին:

Այլ կարգ է սահմանված այն խոր-
հրդային քաղաքացիների ավանդ-
ները տնորինելու համար, վորոնք
մեկնել են արտասահման վորպես
մասնավոր անձինք: Նման ավանդա-
տուների հաշվիներով, մինչ նրանց
խորհրդային Միության վերադառնա-
լը, խնայողական դրամարկղները չեն
կատարում վոչ մուտքի և վոչ ել
յիլի գործառնություններ:

Ավանդատու — ոտարյերկրացինե-
րը, յեթե նրանք գտնվում են
ԽՍՀՄ-ում մուծում և ստանում են
ավանդներ, տալիս են չեկեր, հա-
վատարմագրեր և ավանդները փո-
խանցելու մասին հրամանն այն
նույն կարգով, ինչպես խորհրդային
քաղաքացիները: Յեթե ոտարյեր-
կրացին մեկնել է արտասահման,

ապա ավանդը տնորինելու համար
նա պետք է ստանա խՍՀ Միության
Ֆինսոցկոմատի թույլտվությունը:
Առանց խՍՀՄ-ի Ֆինսոցկոմատի
թույլտվության, խնայողական
դրամարկղը նույնպես չի կարող
վորեւ գումարներ ընդունել արտա-
սահման մեկնած ոտարյերկրացու
հաշվում: Հաշվի րացելով խնայո-
ղական դրամարկղում ոտարյերկրյա
քաղաքացին իրավունք չի ստանում
գումարներն այդ հաշվից արտա-
սահման փոխադրելու:

Ավանդատուն ողտվում է ավանդը
տնորինելու համար հավատար-
մագրեր տալու իրավունքով: Նա
կարող է, յեթե ցանկանում է, նա-
նակել միաժամանակ մի քանի հա-
վատարմատար անձանց: Նրանցից
յուրաքանչյուրը, ով ել լինի, այդ
դեպքում իրավունք ունի ներկա-
յացնելով խնայողական գրքույկը,
հավատարմագրով ստանալ ավանդը:
Առանց խնայողական գրքույկը ներ-
կայացնելու, հավատարմատարին
(այնպես, ինչպես և իրեն ավան-
դատույին) դրամ չի տրվում: Հա-
վատարմագիրը (անկախ նրանից,
թե նա մեկ անգամվա համար է,
թե րազմաթիվ անդամների համար)
ուժի մեջ է մեկ տարվա ընթաց-
քում՝ սկսած այն տալու օրից:
Ավանդատուն կարող է մեծացնել
նրա գործողության ժամկետը մինչև
յերեք տարի, բայց նա այդ պետք է
ծանոթագրի հենց հավատարմա-
գրում:

Ավանդատուն կարող է հավա-
տարմագրերը ձեռակերպել անձնա-
կան հաշվի վրա: Այդ դեպքում՝
ավանդատույի ստորագրությունը
հաստատում է վերահսկիչը: Յեթե
հավատարմագիրը գրված է վոչ
թե անձնական հաշվի վրա, այլ
առանձին թերթ թղթի վրա, ապա
ավանդատույի ստորագրությունը
պետք է հաստատված լինի նոտա-
րական մարմնի (նոտարական գրա-

տենյակի, կամ ժողովրդական դա-
տարանին կից նոտարական սեղա-
նի), շրջգործկոմի, քաղկոթորդի
կողմից, այն պայմանով, յուրաքանչյուր
կողմից, վորտեղ ապրում է ավան-
դատուն, այն ձեռնարկության,
հիմնարկության, զինվորական մա-
սի կողմից, վորտեղ աշխատում
կամ ծառայում է ավանդատուն:
Բացի դրանից հավատարմագրի
ստորագրությունը կարող է հա-
տատել և այն տնային վարչությու-
նը, վորտեղ ապրում է ավանդա-
տուն: Իսկ յեթե ավանդատուն հի-
վանդ է և գտնվում է հիվանդանո-
ցում, սանատորիայում, լազարե-
թում և այլն, ապա նրա ստո-
րագրությունը հավատարմագրի
վրա՝ կարող է հաստատել այդ բու-
ժական հիմնարկության վարչու-
թյունը:

Յեթե հավատարմագիրը տրե-
վում է միայն մեկ անգամ ստանա-
լու համար, և այն ել 300 ո. վոչ
բարձր գումարով, ապա ավանդա-
տույի ստորագրությունը նման հա-
վատարմագրի վրա կարող է և հա-
տատված չլինել (խնայողական
դրամարկղը նման հավատարմագրե-
րով գրամ է տալիս համեմատելով
ավանդատույի ստորագրությունը
նրա անձնական հաշվում յեղած
նմուշի հետ):

Հավատարմագիր կազմելիս՝ ա-
վանդատուն պետք է իր ստորա-
գրությամբ հաստատի հավատար-
մատարի ստորագրության նմուշը:
Իսկ յեթե ավանդատուն վորեւ
պանձառներով այդ չի արել (օրե-
նակ՝ յերբ հավատարմագիրը ա-
վանդատուն գրել է իր անձնական
հաշվի քարտում՝ հավատարմատարի
րացակալությամբ), ապա հավա-
տարմատարն իր ստորագրության
նմուշը պետք է տա այն ժամանակ,
յերբ նա առաջին անգամ դրամ է
ստանում հավատարմագրով: Հավա-
տարմատարը ներկայացնում է իր

անձնագիրը կամ անձնագիրը փոխա-
րինող վկայականը: Մնացողական
դրամարկղի վերահսկիչը գրանցում
է թե ինչ փաստաթուղթ է ներկա-
յացրել համատարմատարը և հաս-
տատում է նրա ստորագրութեան
նմուշը:

Անդրադետ ավանդատունների հա-
վատարմագրերը հաստատում է նո-
տարական մարմինը, չըջգործկումը,
քաղաքային կամ գյուղական խոր-
հուրդը: Իսկ յեթե հավատարմա-
տարն անդրադետ է և ավանդատուն
գրադետ, ապա ավանդատույի ստո-
րագրութիւնը հավատարմագրի
վրա հաստատում է ընդհանուր
կարգով: Ամեն անգամ դրամ ստա-
նալիս հավատարմատարը ներկա-
յացնում է իր անձնագիրը:

Ավանդատույի կողմից տրված
բոլոր հավատարմագրերը կորցնում
են իրենց ուժն ավանդատույի մահ-
վան օրից: Այդ պատճառով հավա-
տարմագիրը չի կարող փոխախնել
կտակային կարգադրութեանը:

Մնացողական դրամարկղի ավան-
դատուն իրավունք ունի կտակելու
իր ավանդը վոչ միայն իր օրինա-
կան ժառանգին, այլև ցանկացած
անձնավորութեանը, կամ կաղմա-
կերպութեանը: Ավանդատուն կա-
րող է ցանկացած ժամանակ չեղ-
յալ համարել այդ կարգադրութիւ-
նը կամ թե փոխարինել այն մի
ուրիշով:

Ավանդը կարելի չէ կտակել վոչ
միայն մի անձնավորութեան կամ մի
կաղմակերպութեան, այլև մի քանի-
սին: Այդ դեպքում՝ պետք է մատ-
նանշվի այն բաժինը, վորը կտակ-
վում է յուրաքանչյուրին: Իսկ յեթե
ավանդատուն, կտակելով ավանդը
մի քանի անձնավորութեան չի մատ-
նանշի նրանցից յուրաքանչյուրի
բաժինը, ապա ավանդը համարվում
է այդ անձնավորութեաններին
կտակած՝ հավասար բաժիններով:

Կտակային կարգադրութիւնն ա-

վանդատուն կարող է գրադել անձնա-
կան հաշվի քարտում խնայողական
դրամարկղում կամ խնայողական
գրքույկում (կամ հաշվարկային
գրքույկում—ընթացիկ հաշվով),
կամ վերջապես, խնայողական դրա-
մարկղի անվանն ուղղված առանձին
դիմումի մեջ: Ավանդատույի ստո-
րագրութիւնն անձնական հաշվի
քարտի վրա հաստատում է խնայո-
ղական դրամարկղի վերահսկիչը:
Իսկ յեթե կտակային կարգադրու-
թիւնը ավանդատուն գրել է վոչ
թե անձնական հաշվի քարտի վրա,
այլ խնայողական կամ հաշվարկա-
յին գրքույկում, կամ առանձին դի-
մումի մեջ, ապա նման կտակային
կարգադրութեան տակ յեղած ստո-
րագրութիւններն անսլաքման պետք
է հաստատված լինեն: Այդ ստորա-
դրութիւնը կարող է հաստատուել
վոչ միայն նոտարական մարմինը,
այլև չըջգործկումը, քաղխորհուրդը,
այն գյուղի գյուղխորհուրդը, վոր-
տեղ ապրում է ավանդատուն, այն
ձեռնարկութիւնը, հիմնարկութիւ-
նը, գինյորական մասը, վորտեղ
աշխատում կամ ծառայում է ավան-
դատուն:

Անդրադետ ավանդատույի կտա-
կային կարգադրութիւնը չի կա-
րող արվել խնայողական դրամարկ-
ղում յեղած անձնական հաշվի քար-
տում: Այդպիսի կտակային կար-
գադրութիւնը գրանցվում է խնա-
յողական գրքույկում կամ խնայո-
ղական դրամարկղի անվանն ուղղ-
ված դիմումի մեջ և հաստատվում
է նոտարական մարմնի, չըջգործկո-
մի, քաղխորհուրդի կամ գյուղխոր-
հուրդի կողմից:

Ըստ կտակային կարգադրութիւն
արած ավանդատույի ցանկութեան,
խնայողական դրամարկղի վերա-
հսկիչը գրանցում է խնայողական
գրքույկում այդ կարգադրութեան
լրիվ տեքստը կամ նշում է՝ «ա-
վանդը կտակված է»: Հասկանալի

յե, վոր յեթե ավանդատուն այդ չի
ցանկանում, ապա կտակային կար-
գադրութեան մասին վոչ մի նշում
խնայողական գրքույկում չի ար-
վում:

Անհրաժեշտ է առանձնապես
ընդգծել, վոր կտակային կարգա-
դրութիւնները և հավատարմագրերը
գրանցվում են անձնական հաշվի
քարտի դանդաղ մասերում, կտա-
կային կարգադրութիւնները—հատ-
կապես գրանց համար առանձ-
նացված սուրճակում, հավատար-
մագրերը—նշումների համար սուր-
ճակում: Գրանցման տեքստը պետք
է պարզորեն ցույց տա, թե արել
է արդյոք ավանդատուն կտակային
կարգադրութիւն, կամ թե նա
հանձնարարում է խնայողական
գրամարկղին՝ դրամ տալ հավա-
տարմատարին: Առաջին դեպքում
տեքստի մեջ մատնանշվում է՝
«ավանդը կտակում եմ այսինչին»,
յերկրորդ դեպքում՝ «լիազորում եմ
այսինչին տնօրինել ավանդը»: Կտա-
կային կարգադրութիւնում կամ
հավատարմագրում անսլաքման
պետք է նշվի ժամանակը: Այդ կա-
րեոր է այն պատճառով, վոր վեր-
ջին կտակային կարգադրութիւնը
վոչնչացնում է նախկինին, իսկ հա-
վատարմագրին ուժի մեջ է միայն
որենքով սահմանված ժամկետի ըն-
թացքում:

Ավանդատույի մահից հետո կտակ-
ված ավանդը տրվում է այն ան-
ձանց, վորոնք մատնանշված են
կտակային կարգադրութեան մեջ:
Նրանք պետք է ներկայացնեն
Ձագս—ի մարմնի տեղեկանքն ավան-
դատույի մահվան մասին, խնայո-
ղական գրքույկը և իրենց անձնա-
գիրը:

Ձկտակված ավանդը կարող է
տրվել ավանդատույի մահից հետո
միայն նրա օրինական ժառանգնե-
րին: Այդպիսի ժառանգներ են հան-
դիսանում ամուսինը, կինը, յերե-

խաները, թոռները, ծոռները, վոր-
դեպքում անձնավորութիւնները,
մյուս անձինք կարող են ժառանգել
ավանդը միայն այն դեպքում, յեթե
նրանք անաշխատունակ են և վոչ
պակաս, քան մեկ տարի մինչ ա-
վանդատույի մահը՝ դանդում էլին
նրա լիակատար խնամքի տակ:

Ավանդը կամ նրա մի մասը, մին-
չև 300 ու. դոլարով խնայողական
դրամարկղը պետք է վճարի ավան-
դատույի ներկայացած ժառանգնե-
րին՝ առանց ժառանգական իրա-
վունքների մասին նրանց կողմից
նոտարական մարմնի վկայականը
ներկայացնելու: Մնացողական դրա-
մարկղն ինքը պետք է համոզվի նը-
րանում, վոր ավանդն ստանալու
համար ներկայացած անձինք իսկա-
պես ժառանգներ են հանդիսանում:
Այդ անձնավորութիւնները, բացի
խնայողական գրքույկից և ավան-
դատույի մահվան մասին յեղած
վկայականից պետք է ներկայացնեն
նաև ժառանգների անձնավորու-
թիւնը և դեպի ավանդատուն ու-
նեցած նրանց ազգակցական հարա-
բերութիւնը հաստատող փաստա-
թղթերը: Ավանդն ստացող ժա-
ռանգները պետք է պարտավորագիր
տան այն մասին, վոր ուրիշ ժա-
ռանգներ հայտնվելու դեպքում, ի-
րենք պարտավորվում են իրենց մի-
ջոցներից վճարելու նրանց համոզ
բաժինը:

Ավանդի մնացորդը, բացի 300
ուրբուց (օրինակ՝ յեթե ավան-
դատույի մահից հետո մնացել է
1000 ուրբի դոլարի ավանդ, ապա
մնացորդը 700 ու. դոլարով) խնա-
յողական դրամարկղը տալիս է ժա-
ռանգներին միայն այն բանից հետո,
յերբ նրանք կներկայացնեն նոտա-
րական մարմնի վկայականը՝ ժա-
ռանգութիւն ստանալու իրավունքի
մասին:

Ավանդից կարող են դոլարներ
տրվել ավանդատույի թաղման, նրա

հիմնադրութեան ժամանակ ցույց տալով ըստ իրական ոգնութեան և աշխարհային համար տրված ծախսերը հատուցելու համար: Դրա համար խնայողական դրամարկղին պետք է ներկայացվի նոտարական մարմնի համապատասխան վերոշումը:

Յեթե ավանդատուն մեռել է առանց ավանդը կտակելու և ժառանգներ չունի, ապա ավանդը համարվում է անտեր և փոխանցվում է պետական յեկամուտում: Նման փոխանցումը խնայողական դրամարկղին անում է Ֆինանսական մարմնի դրավոր պահանջով՝ հիմնված անտեր մնացած ավանդի մասին նոտարական մարմնի կողմից տրված վկայականի վրա:

Յերբեմն, ժառանգական իրավունքները փորձելու ժամանակ, նոտարական մարմնին անհրաժեշտ է լինում տեղեկանք ստանալ այն մասին, թե կան արդյոք խնայողական դրամարկղում չկտակված ավանդ մեռած քաղաքացու անվան և վորքան մեծ է այդ ավանդի գումարը: Նման տեղեկանքը տալը չի՞ խախտում արդյոք ավանդների պաշտնիքը: Վո՞չ: Խնայողական դրամարկղը պարտավոր է նոտարական դրամանյակին տալ նման տեղեկանք այն պայմանով, յեթե նոտարական մարմնի հարցման մեջ ասված է, վոր ավանդատուն մեռել է:

Անհրաժեշտ է հիշեցնել պայմանական ավանդների մասին: Պայմանական են կոչվում այն ավանդները, վորոնք տրվում են միայն վորոշ պայմաններ պահպանելուց հետո, կամ այնպիսի առանձին համապատասխան վերահասանելուց հետո, վորոնք ծանոթագրվել են մուծման ժամանակ: Ավանդի պայմանը չպետք է հակասի օրենքին, պետք է պարզ լինի և նրա կատարումը գծվար չպետք է լինի: Որինակի համար կարելի յե առաջ բերել այնպիսի պայմանական ավանդ, վորը

պետք է տրվի ավանդատունին այն բանից հետո, յերբ նա չափահաս կդառնա կամ կավարտի ուսումնական հաստատությունը:

Մինչ պայմանը կատարելը կամ մուծման ժամանակ մատնանշված հանգամանքները վերահասանելը պայմանական ավանդն տանալու համար, անհրաժեշտ է ավանդատունի համաձայնությունն այն անձնավորություն հետ, վորը մուծել է ավանդը:

Ավանդները խնայողական դրամարկղները կարող են մուծվել վորոշ անձի անունով: Այդպիսի ավանդները կոչվում են անվանական (именные): Տվյալ գեպըում ավանդատու յե հանդիսանում այն անձնավորությունը, վորի անունով ընդունվել է ավանդը և տրվել է խնայողական դրամարկղ: Դրա հետ միասին ավանդը կարող է մուծվել և «ներկայիչի անվան» կամ «ներկայչական» («на предъявителя»): Այդ գեպըում ավանդատու յե հանդիսանում այն յուրաքանչյուր անձնավորությունը, վորը խնայողական դրամարկղին ներկայացնում է համապատասխան խնայողական դրամարկղի «ներկայիչի անունով» և այդ դրամարկղի հսկիչ թերթիկը: Այդ ձևի ավանդները կոչվում են «ներկայչական»: Նրանք կարող են մուծվել վոր ըրոր խնայողական դրամարկղները, այլ միայն կենտրոնական (քաղաքային) և չրջանային խնայողական դրամարկղները: Վործառնություններն մասերում:

Ավանդատուն կարող է ընթացիկ հաշիվ բացել խնայողական դրամարկղում:

Ընթացիկ հաշվի հիմնական տարբերությունը սովորականից կայանում է նրանում, վոր ավանդատուն, խնայողական դրամարկղի փոխարեն, ստանում է չեկային և հաշվարկային դրամարկղներ:

Երբ դրամարկղը տրվում է ավանդատունին 30 կ. վճարով: Հաշվարկային դրամարկղում խնայողական դրամարկղը դրանցում է միայն մուտքի գործառնությունները, յեթե յեթե գործառնությունները տանում է ինքն ավանդատուն: Չեկն իրենից ներկայացնում է վորպես մի հրաման խնայողական դրամարկղին՝ վորոշ գումար վճարելու համար: Ունենալով խնայողական դրամարկղ, ավանդատուն պետք է ավանդն ստանալու համար ներկայացնի այդ դրամարկղ, կամ դրամն ստանալու համար տրված հավատարմագրի հետ միասին՝ հանձնի այն մի ուրիշ անձնավորություն: Ունենալով ընթացիկ հաշիվ, ավանդատուն կարող է չեկեր տալու միջոցով մաքրել իր հաշիվները ցանկացած անձանց կամ կազմակերպությունների հետ:

Յուրաքանչյուր չեկում նշվում է այն խնայողական դրամարկղի համարն ու տեղը, վորտեղ տարվում է ավանդատունի ընթացիկ հաշիվը, այդ հաշվի համարը, ավանդատունի ազգանունն, անուն, և հայրանունը: Այդ ըրոր տեղեկությունները խնայողական դրամարկղը դրանցում է յուրաքանչյուր չեկում այն ժամանակ, յերբ չեկային դրամարկղը տանի և ավանդատունին:

Ավանդատուն կարող է չեկ տալ վորոշ անձի անվան կամ ներկայիչի անվան: Չեկը պետք է անպայման համապատասխանի հետևյալ պայմաններին՝ նա պետք է լրացրած լինի թանաքով, առանց վորեկ ուղղումների և ջնջումների, նրա վրա պետք է մատնանշված լի-

նեն՝ թիվը, ամիսը (բառերով) տարին և տալու տեղը (քաղաքի կամ գյուղի անվանումը), այն գումարը, վորը պետք է վճարվի չեկով—բառերով և թվերով, այն անձի ազգանունն, անունը և հայրանունը, վորին պետք է վճարվի գումարը չեկով (յեթե չեկը տրված է վոչ ներկայիչի անունով) և, վերջապես, ավանդատուն պետք է ստորագրի չեկը: Ծառերեն կազմված չեկն ուժի մեջ է տաան օր, չհաշվելով տալու օրը: Յեթե չեկի գործողությամբ ժամկետը լրանում է խնայողական դրամարկղի համար վոչ աշխատանքի օրը, ապա այդ չեկը կարող է վճարվել և հետևյալ օրը:

Յեթե չեկի վրա (նրա առաջին յերեսի վրա) նշված է «հաշվարկային», ապա խնայողական դրամարկղին իրավունք չունի նրանով կանխիկ դրամ վճարելու, այլ պարտափոր է նրանում գրված գումարը անկանխիկ հաշվարկումների կարգով փոխանցել ավանդատունի ցուցմունքով:

Ընթացիկ հաշիվ կարող է բացվել ամեն մի դրամարկղ ավանդատունի համար, սակայն ավանդատունների—առանձին քաղաքացիներ—ծնող մեծամասնությունը չի ոգտվում ընթացիկ հաշիվով, վորը բացատրվում է ընթացիկ հաշվի գործառնությունների հայտնի բարդությունները ավանդատունի համար (չեկեր լրացնելու կանոնները պահանջում անհրաժեշտություններ, յեթե գործառնությունների հաշվառումն ինքուրույն կերպով վարեն):

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐԸ

Քացի բնակչության ավանդները, խնայողական դրամարկղները կարող և են հաշիվները ունենալ միայն այն մի քանի կազմակերպությունների, վորոնք

միջոցները: Վորպես կանոն, խնայողական դրամարկղներում կարող են հաշիվները ունենալ միայն այն մի քանի կազմակերպությունների, վորոնք

պարտավոր չեն իրենց միջոցները պահելու մյուս վարկային հիմնարկութիւններում:

Այդ պատճառով բյուջետային հիմնարկութիւնները, բացի դուրս գալիս բյուջեներում պտնվողներից, պետական անտեսական կազմակերպութիւնները և կոոպերատիվ կազմակերպութիւնները հաշիվներ չը պետք է բացեն խնայողական դրամարկղներում: Կոոպերատիվ և կոմիտեական կազմակերպութիւնները նույնպես հաշիվներ չեն բացում խնայողական դրամարկղներում:

Խնայողական դրամարկղները, ավանդատուների թիվում կարող են լինել գյուղական խորհուրդները և գյուղական բյուջեում գտնվող կազմակերպութիւնները, կոլտնտեսութիւնները, արհեստակցական և հասարակական ստորին կազմակերպութիւնները (որինակ՝ գործարկումները, տեղեւոյները, փոխուհները դրամարկղները և այլն) և, վերջապես, տնային վարչութիւնն այն տեղերում, վորտեղ չկան կոմունալ բանկեր: Իր միջոցները խնայողական դրամարկղում պահող յուրաքանչյուր գյուղական խորհուրդի համար բացվում են յերկու հաշիվներ—ընթացիկ հաշիվ՝ գյուղական բյուջէի միջոցների համար և ընթացիկ հաշիվ՝ մյուս արտաբյուջետային միջոցների համար:

Կոլտնտեսութիւնները կարող են իրենց միջոցներն ըստ ցանկութեան պահել պետական բաժանմունքում, խնայողական դրամարկղներում այդ յերկու վարկային հիմնարկութիւններում:

Գյուղական խորհուրդներն ու կոլտնտեսութիւնները կարող են իրենց հաշիվները բացել ցանկացած խնայողական դրամարկղներում, բացի գործարկութիւններից: Իսկ մնացած բոլոր կազմակերպութիւնները կարող են հաշիվներ ունենալ

միայն կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներում և նաև առաջին կարգի խնայողական դրամարկղներում:

Հաշիվ բացող կազմակերպութիւնը պետք է ներկայացնի այն կանոնադրութիւնը կամ որոնագրութիւնը, վորոնց հիման վրա նա դուրս գալիս յուր ունի, կամ թե վերադաս կազմակերպութեան թույլտւութիւնը հաշիվ բացելու համար, կամ այլ փաստաթղթեր, վորոնք ապացուցում են, վոր տվյալ կազմակերպութիւնն իրավունք ունի իր միջոցները պահելու խնայողական դրամարկղում: Պետք է ներկայացնել նաև ընթացիկ հաշիվը տնտեսնող անձանց ստորագրութիւնները և կնքի նմուշը: Ստորագրութիւնների այդ նմուշները և կնքի նմուշը ներկայացնելու համար խնայողական դրամարկղներում կան հատուկ ձևի քարտեր: Գյուղխորհուրդի ստորագրութիւնների և կնքի նմուշները հաստատում են շրջֆինբաժնի վարչը, կոլտնտեսութեանը — գյուղխորհուրդը, հասարակական կազմակերպութեանը—վերադաս կազմակերպութիւնը կամ այն հիմնարկութեան, ձեռնարկութեան վարչութիւնը, վորի աշխատակիցներն միացնում են այդ հասարակական կազմակերպութիւնը: Ստորագրութիւնների և կնքի նմուշները կարող են հաստատվել նաև նոտարական մարմնի կողմից:

Կազմակերպութիւնների համար բացվում են միայն ընթացիկ հաշիվներ: Այնպիսի ամենափոքր չափը կազմակերպութեան ընթացիկ հաշիվում սահմանված է 25 ուրբի:

Կոլտնտեսութեան ընթացիկ հաշիվներով խնայողական դրամարկղները յեկամուտ են վճարում տարեկան 3 տոկոս, իսկ մյուս բոլոր կազմակերպութիւնների ընթացիկ հաշիվներով տարեկան 1 տոկոս:

Կոլտնտեսութեան հաշիվում Պետ-

բանկից կամ փոստային փոխադրումով ստացված յուրաքանչյուր դրամարկ մասին խնայողական դրամարկղը պարտավոր է գրավոր կերպով հաստատել կոլտնտեսութեան վարչութեան:

Կազմակերպութիւնների, ավանդների վրա լրիվ չափով չի տարածվում այն որոնագրութիւնը, վորը գոյութիւն ունի ավանդների անձեռնամխելիութեան և վաղաժամ հաշիվ մասին: Այդ ավանդների համար խնայողական դրամարկղներում սահմանված է այն կարգը, վորը գոյութիւն ունի և ուրիշ վարկային հիմնարկութիւններում: Կազմակերպութիւնների ավանդների մասին տեղեկանքներ խնայողական դրամարկղները տալիս են, ինչպես քրեյական, այնպես էլ քաղաքացիական գործերով, դատական և քննչական մարմիններին, խորհրդային վերահսկողութեան հանձնաժողովի մարմիններին, Ֆինմարմիններին, նաև այն սխտեմի վերադաս հիմնարկութիւններին, վորի մեջ մտնում է տվյալ կազմակերպութիւնը, և այդ կազմակերպութեան վերատուգելի հանձնաժողովին: Կազմակերպութիւնների ավանդները կարող են տուգանքի կամ կալանքի յենթարկվել դատական մարմինների վորոշմամբ, նոտարական մարմինների կատարողական մականագրութիւններով, պետական արբիտրաժի հրամաններով հարկային և վոչ հարկային վճարումները բյուջէին հանձնելու և սոցալի վճարումները գանձելու համար:

Սակայն, առանձին կանոններ են սահմանված գումարները գյուղական խորհուրդների և կոլտնտեսութիւնների հաշիվներից դուրս գրելու համար: Գյուղխորհուրդի ընթացիկ հաշիվ միակ տնտեսնողը հանդիսանում է նրա նախագահը: Խնայողական դրամարկղ իրավունք ունի գյուղական խորհուրդի ընթացիկ

հաշիվից գումար դուրս գրելու միայն այն չեկի հիման վրա, վորն ստորագրված է գյուղխորհուրդի նախագահի և քարտուղարի կողմից և կնքված գյուղխորհուրդի կնիքով: Գյուղական խորհուրդի հաշիվից առանց չեկի գումարներ դուրս գրելը կարելի չէ միայն դատական մարմինների վորոշմամբ, նաև շրջանային գործարկի կոմիտեի նախագահութեան (յուրաքանչյուր դեպքի համար առանձին) հատուկ վորոշումով: Շրջգործկոմը նման վորոշում կարող է ընդունել միայն այն դեպքում, յեթե գյուղ բյուջէի միջոցներում անորոշական կարգով հաշիվներ են վերադաս բյուջէներին պատկանող գումարները, յեթե գյուղական խորհուրդը չի մարել վերադաս բյուջէներից ստացած փոխադրութիւնները, չի կատարել սահմանված մասհանումները կարգաւորող ֆոնդերին կամ թե չի մարել սոցիալական ապահովագրութեան մուծումների պարտքը: Բացի դրանից, հարկադիր կարգով դուրս գրելը թույլատրվում է այն դեպքերում, յերբ շրջգործկոմը վճարել է աշխատավարձի պարտքը գյուղական բյուջէի հաշիվին:

Շրջգործկոմի նախագահութեան վորոշման մեջ մատնանշվում է միջոցները դուրս գրելու չափն ու ժամկետներն:

Այն բոլոր դեպքերում, յերբ դուրս գրելը գյուղական խորհուրդի ընթացիկ հաշիվից դուրս են գրվում շրջգործկոմի վորոշմամբ, խնայողական դրամարկղին ներկայացվում է կարգադրութիւն, վորն ստորագրված պիտի լինի անձամբ շրջֆինբաժնի վարչի կողմից և հաստատված՝ շրջֆինբաժնի կնիքով: Կարգադրութեանը կցվում է շրջգործկոմի նախագահութեան վորոշման հաստատված պատճեն: Կոլտնտեսութեան ընթացիկ հաշիվից խնայողական դրամարկղներն իրա-

վունք ունեն միջոցները դուրս դրե-
լու միմիայն կոլտնտեսութեան վար-
չութեան նախագահի և կոլտնտեսու-
թեան հաշվետարի կողմից ստո-
րագրված չեկով: Ստորագրութեան-
ների նմուշների հետ միասին խնա-
յողական դրամարկդին և ներկայաց-
վում կոլտնտեսութեան վարչութեան
այն վորոշման պատճեն, վորի հի-
ման վրա այդ անձնավորութեան-
ները լիազորված են տնորինելու ըն-
թացիկ հաշիվը: Կոլտնտեսութեան
ընթացիկ հաշիվից առանց չեկի գու-
մարները դուրս գրել խնայողական
դրամարկդին իրավունք ունի միայն
դատական մարմինների վճիռներով:
Դատական մարմինների վորոշում-
ներով կարող է դուրս գրվել այն
մնացորդի 70 տոկոսից վոչ ավելին,
վորը մնում է ընթացիկ հաշիվում
դուրս գրելու ժամանակ և հետա-
գայում—70 տոկոսից վոչ ավել
այն գումարներից, վորպիսիք նոր
են մտնում ընթացիկ հաշիվում:
Յուրաքանչյուր անգամ, յերբ դրամ
է դուրս գրվում դատական մար-
մինի վճռով, խնայողական դրա-
մարկդը պարտավոր է դրամվոր
հայտնել կոլտնտեսութեանը: Վորեւ
այնպիսի վճարումներ դուրս գրել
կոլտնտեսութեան ընթացիկ հաշիվից,
վորպիսիք հանում են վոչ թե կոլ-
տնտեսութեաններից, այլ կոլ-
տնտեսականներից, արգելվում է:
Վերելում մատնանշված է, վոր
խնայողական դրամարկդներում հա-
շիվներ չեն բացվում բյուջետային
և տնտեսական կազմակերպութեան-
ներին: Առավել ևս իրավունք չու-
նեն խնայողական դրամարկդները
վերցնելու իրենց վրա այդ կազմա-
կերպութեանների դրամարկդային
պահարկման պարտականութեան-
ները (որինակ՝ բանվորներին և ծա-
ռայողներին աշխատավարձ վճարելը
և այլն):

Մինչև 1932 թվականը մի քանի
խնայողական դրամարկդներ կատա-

րում էյին աշխատավարձի վճարման
գործառնութեաններ: Մի ուրիշ
խնայողական դրամարկդներ իրենց
վրա էյին վերցրել ձեռնարկութեան-
ների գանձապահների կողմից չբա-
ժանված աշխատավարձի գումար-
ների պահպանման և վճարման պար-
տականութեանները (մասնավորա-
պես յերկաթուղային տրանսպոր-
տում): Ներկայումս այդ բոլոր գու-
մարները, վոր նախկիններում հաշ-
վեղրվել են խնայողական դրամար-
կդներում միացյալ հաշիվներում,
պահվում են խնայողական դրամար-
կդներին հանրապետական, յերկրա-
յին և մարզային վարչութեաննե-
րում: Այդ նույն վարչութեաննե-
րումն էլ գտնվում են այն անձանց
ցուցակները, վորոնց պատկանում է
չբաժանված աշխատավարձը: Այն
անձնավորութեանը, վորն իր աշ-
խատած տեղի ձեռնարկութեանից
տեղեկանք է ներկայացրել խնայո-
ղական դրամարկդին կամ ուղղակի
վարչութեանն այն մասին, վոր ինքն
աշխատավարձը չի ստացել, վար-
չութեանը մատնանշված գումարը
փոխադրում է փոստով:

Վարչութեաններումն են պահվում
և այն կազմակերպութեանների ա-
վանդները (25 ու բարձր գումարնե-
րով), վորոնք 1934 թ. հունվարի
1-ից չեն դիմել խնայողական դրա-
մարկդին՝ մուծելու կամ դրամն
ստանալու համար: Ավանդատուների
(կամ նրանց իրավաժառանգների)
պահանջով այդ ավանդները վարչու-
թեանը փոստով ուղղակի փոխա-
դրում է նրանց:

Կազմակերպութեանների ավանդ-
ները խիստ տարբերվում են բնակ-
չութեան (առանձին քաղաքացիների)
ավանդներից և հաշիվ յեւն ստնվում
այդ ավանդներից առանձին: Նման
կարգը անհրաժեշտ է, ամենից ա-
ռաջ, նրա համար, վոր ավանդա-
տուները—առանձին քաղաքացիները
և ավանդատուները—կազմակերպու-

թեանները ոգտվում են, ինչպես
ցույց է տրված վերելում, զանազան
իրավունքներով: Բնակչութեան ա-
վանդների և կազմակերպութեանների
ավանդների առանձին հաշիվումն
անհրաժեշտ է նաև բնակչութեան
խնայողութեանների ներգրավման
աշխատանքները ճիշտ գնահատելու
համար, վորովհետև այդ աշխա-
տանքները խնայողական դրամարկդ-
ների համար հիմնական են հանդի-
սանում:

1938 թ. հունվարի 1-ին խնայո-
ղական դրամարկդներում կային կազ-

մակերպութեանների 347 հազար հա-
շիվներ, ավանդների 278 միլիոն
ոտուրի ընդհանուր գումարով: Ավե-
լի բազմաթիվ են ստորին պրոֆ-
միութենական և այլ հասարակական
կազմակերպութեանների հաշիվները:
Գյուղական խորհուրդների և կոյ-
տնտեսութեանների հաշիվներն ավե-
լի քիչ են, վորովհետև գյուղական
խորհուրդների և կոլտնտեսութեան-
ների ճնշող մեծամասնութեանը իր
հաշիվները պահում է բանկում և
վոչ թե խնայողական դրամարկդնե-
րում:

10. ԱՎԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ ՎԵՐԱՆՍԿԱՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ *)

Ավանդների ընդունումն ու հանձ-
նումը խնայողական դրամարկդներին
համար հանդիսանում են ավելի մաս-
սակական գործառնութեաններ, նրա-
նով ոգտվում են բնակչութեան լայն
խավերը, նա դրամվում է խնայողա-
կան դրամարկդների աշխատողների
ամբողջ բանվորական ժամանակի
զգալի մասը: Ավանդներ ընդունում
և տալիս են բոլոր խնայողական
դրամարկդներն առանց քաղաքու-
թեան: Այդ պատճառով ավանդնե-
րի գործառնութեանների ձևակերպ-
ման տեխնիկան պետք է լինի անա-
վերադարձ չափով հասարակ:

Ավանդների գործառնութեանների
ձևակերպման ժամանակ կիրառվում
են հետևյալ հիմնական տեսակների
փաստաթղթերը՝ խնայողական դրա-

քույկներ, անձնական հաշիվների
քարտեր, որդերներ, գործառնու-
թեանների որագրեր, այբբենական
քարտեր:

Խնայողական դրքույկը տրվում է
ավանդատույին առձեռն: Այդ փա-
սաթղթով ավանդատուն կարող է
ցանկացած ժամանակ վորոշել իր ա-
վանդի մնացորդը և նրա շարժումը
նաև տուրքի իր հաշիվ ձեռքի տալ
վա: Խնայողական դրքույկն ավան-
դատուն պետք է ներկայացնի յուրա-
քանչյուր անգամ ավանդն ստանալու
ժամանակ: Վերահսկելը դրանցում
է նրանում ավանդների բոլոր գոր-
ծառնութեանները: Յեթե ավանդա-
տուն լրացուցիչ մուծումն է անում,
չունենալով իր հետ խնայողական
դրքույկը, ապա նրան տրվում է ա-
ռանձին—առանձին անդորրագիր:

Խնայողական դրամարկդում պահ-
վող անձնական հաշիվում դրանցվում
է ավանդատույի կողմից կատարված
յուրաքանչյուր առանձին գործառ-
նութեանը (ամիսը, թիվը և տարին,
գործառնութեան անվանումը, նրա
գումարը, ավանդի մնացորդը գոր-
ծառնութեանից հետո) և տարվում է
ավանդների տոկոսների հաշվառում:
Անձնական հաշիվ քարտի վրա գըր-
վում է ավանդատույի ազդանունն,

*) Խորհրդային Միության այն քաղաք-
ներում, վորտեղ խնայողական դրամարկդ-
ներում կիրառվում է այսպես կոչված «ա-
վանդատուների անձնական հաշիվները
կենտրոնացված կարգով վարելու սխեման»,
ավանդների գործառնութեանների ձևա-
կերպված և վերահսկողութեան տեխնիկան
տարբերվում է այն դիմում նկարագրվա-
ծից:

անունը և հայրանունը, լինում է նրա ստորագրության նմուշը, հիմնական տեղեկություններ նրա մասին՝ հասցեն, տարիքը, զբաղմունքը, սոցիալական դրությունը: Այդ տեղեկություններից մի քանիսն ուղևորվում են խնայողական դրամարկղին, վորպեսզի կանխել ավանդի հանձնումը այլ անհավորություն, վորը գողացել կամ դուրս է կորցրած խնայողական գրքույկը, մյուսները պետք են ավանդների վիճակագրական հաշվառման համար: Սակայն, ավանդատուն իրավունք ունի չհայտնել այդ տեղեկությունները:

Անձնական հաշվի վրա կարող են գրվել ավանդի պայմանը, կտակալին կարգադրությունը, հավատարմագիրը և այլն:

Բոլոր խնայողական դրամարկղները (նույն թվում և խնայողական դրամարկղների գործադրությունները) գրանցումներն իրենց ավանդատուների անձնական հաշիվներում, տանում են ինքնուրույն կերպով:

Ավանդների յուրաքանչյուր գործառնություն ժամանակ դուրս է գրվում որդեր: Ընդամենը՝ կիրառվում է մի քանի տեսակի որդերներ, նայած թե այդ որդերը կազմվում է արդյոք ավանդը մուծելու թե ստանալու ժամանակ, գործառնությունը կանխիկ դրամով է կատարվում թե հաշվային շրջանառությունների միջոցով: Մուտքի որդերը-ավանդից դրամ տալու որդերը ստորագրում է ավանդատուն և ծառայում է վորպես նրա ստացականը՝ դրամն ստանալու համար:

Բոլոր մուտքի որդերները նույնպես ստորագրվում են ավանդատուների (կամ նրանց անունով՝ դրամ մուծողների) կողմից: Կանխիկ դրամով յեղած գործառնությունների մուտքի և յեղքի որդերները տրվում են զանազապահին և վերջինիս համար ծառայում են վորպես հրամաններ՝ դրամն ընդունելու կամ հանձնելու մասին:

Գործառնության որպա վերջում՝ կանխիկ դրամով յեղած գործառնություններն որդերներն ուղարկվում են վերահսկիչի և զանապահի աշխատանքների փոխադարձ ստուգման համար:

Որդերները ծառայում են նաև ստորին խնայողական դրամարկղի կողմից կենտրոնական կամ շրջանային դրամարկղին հաշվետվություն տալու համար, նրանք սպասարկվում են վերջինիս հաշվապահություն՝ վերահսկողության և հաշվառման նպատակների համար:

Գործառնության որագրում հերթական կարգով գրանցվում են խնայողական դրամարկղի կողմից կատարած բոլոր գործառնությունները: Ավանդների գործառնությունների համար այս որագրում առանձնացված են հատուկ սուբյեկտներ (առանձին սուբյեկտներ կան կանխիկ դրամով յեղած և հաշվային շրջանառությունների գործառնությունների համար, նաև առանձին քաղաքացիների ավանդների և կազմակերպությունների ավանդների գործառնությունների համար): Գործառնության որագրի մասերը տարվում է յերկու որինակից պատճենահան թղթով: Գործառնությունն ուր փակելու ժամանակ՝ որագրի մասերը ծառայում է վերահսկիչին զանազապահի աշխատանքներն ստուգելու համար: Գործառնության որը վերջանալուց հետո՝ որագրի մեկ որինակն ուղարկվում է կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղին, իսկ մյուսը մնում է ստորին խնայողական դրամարկղում տեղեկանքների համար:

Այբբենական քարտը լրացնում է ավանդատուն հաշիվը բացելիս: Նրա ուղևորվումը՝ ավանդատույն աղդանունով կարելի չէ գտնել նրա հաշվի համարը, որինակ՝ խնայողական գրքույկը կորցնելու դեպքում:

Մնայողական դրամարկղների ավանդատուների հաշիվներում կարող են մուտք լինել միջ միայն կանխիկ

դրամով մուծվող դրամարները այլևայն դրամարները, վորպեսզի փոխանցվում են մյուս ավանդատուների հաշիվներից, փոստային փոխադրումների դրամարները, և պետական բանկից փոխանցվող մի քանի դրամարները:

Փոստային փոխադրումների դրամարները և պետական բանկի բաժան մուծներից փոխանցվող դրամարները կարող են մուտք լինել խնայողական դրամարկղները միայն կենտրոնական կամ շրջանային դրամարկղի հաշվապահության միջոցով:

Ավանդը մի հաշվից մյուսին փոխանցելը խնայողական դրամարկղը կարող է միայն այն ավանդատույն գրավոր դիմումի հիման վրա, վորի հաշվից փոխանցվում են դրամները:

Յեթե փոխանցման միջոցով մուտք յեղած դրամարի համար պետք է նոր հաշիվ բացվի, ապա խնայողական գրքույկը դուրս է գրվում միայն ավանդատույն ներկայանալու ժամանակ:

Ավանդների անվթարության պատահանստվությունը դրված է խնայողական դրամարկղի վրա: Վորպեսզի կանխել դրամն ստանալու հրապարություններն այն անձի կողմից, վորը կարող է գտնել կորցրած խնայողական գրքույկը կամ գողանալ այդ գրքույկն ավանդատուից, խնայողական դրամարկղի վերահսկիչը պարտավոր է ավանդը հանձնելիս կամ դուրս գրելիս՝ մանրագնին համեմատել որդերի կամ չեկի վրա յեղած ավանդատույն ստորագրությունը՝ անձնական հաշվի քարտի վրա յեղած ստորագրության նմուշի հետ: Յեթե վերահսկիչի մեջ կատարվում է ծագում դրամն ստանալու համար ներկայացած անձնավորության ավանդատու լինելու մասին, ապա նա կարող է դրամն ստացողից պահանջել ներկայացնել անձնագիր (կամ անձնագիրը փոխարինող ուրիշ փաստաթուղթ): Հասկանալի չէ, վոր խնայողական դրամարկղն այդ իրավունքով պետք է ուղարկի առանց մի

առանձին անհրաժեշտության, վորպեսզի ավելորդ դժվարություններ չստեղծի ավանդատուների համար:

Անդրազեա ավանդատուները ներկայացնում են անձնագիր կամ անձնագրին փոխարինող փաստաթղթեր՝ ավանդների յեղքի բոլոր գործառնությունները ժամանակ (վորովհետև այլ կերպ չի կարելի ստուգել, թե խնայողական գրքույկը ներկայացնողն իսկապես ավանդատու չէ հանդիսանում): Ավանդատուների տուկոսները խնայողական դրամարկղներում հաշվվում են առանձի մեթոդով, վորը տարբերվում է մյուս վարկային հիմնարկություններում կիրառվող մեթոդից: Յուրաքանչյուր գործառնության ժամանակ, տուկոսներն ավելանում են մուծման դրամարի վրա, կամ թե պակասեցվում են արվող դրամարից այն ժամանակի համար, վորը մնում է մինչև գործառնության տարվա վերջը (յուրաքանչյուր լրիվ ամիս հաշվում են 30 օր):

Ընդամենը մինչև տարվա վերջը մնացող օրերի թիվը յեղքի գործառնությունների համար հաշվի են առնվում ներառյալ և գործառնություն կատարելու օրը, իսկ մուտքի համար առանց այդ օրը: Տոկոսները հաշվում են հետևյալ բանվորական օրից (տուկոսները հաշվելու ժամանակ միջ բանվորական օրեր են համարվում միայն՝ հունվարի 22-ը, մայիսի 1 և 2-ը, նոյեմբերի 7 և 8-ը և դեկտեմբերի 5-ը): Յուրաքանչյուր գործառնությունից հետո՝ հաշվում դուրս է բերվում տուկոսների մնացորդը: Տուկոսները միացվում են ավանդի դրամարին մինչև նոր տարվա վերջը (360 օրվա ընթացքում) նորից տուկոսներ են հաշվում արդեն ավանդի ավելացած դրամարի համար:

Այն ավանդատուներին, վորոնք տարվա ընթացքում փակում են իրենց հաշիվը, անցած ժամանակի աճած տուկոսների դրամարը տրվում

ե ամանդի գումարի հետ միաժամանակ:

Տոկոսներ հաշվելու աշխատանքները հեշտացնելու համար կերպովում են հատուկ աղյուսակներ:

Մասնաշված յեղանակով տուկոսներ են հաշվում միայն առանձին քաղաքացիների հաշիվների և այն կազմակերպությունների հաշիվների համար, վորոնք տարվա ընթացքում կատարում են համեմատաբար քիչ թվով գործառնություններ: Կապակերպությունների առանձնապես չարժական հաշիվների համար (որական 5 գործառնություններից ավելի) տուկոսները հաշվում են հեշտացրած յեղանակով, տարեկան մեկ անգամ՝ ամանդի միջին մնացորդի համար:

Այդ միջին մնացորդն ստացվում է 24 օրվա մնացորդները գումարելու միջոցով (2 օր յուրաքանչյուր ամսում), վորը սահմանում են պետական աշխատատեղերական խնայողական դրամարկղների և պետական վարկի Գլխավոր Վարչությունը, և ստացված գումարը 24-ի վրա բաժանելով:

Սխտեմատիկ հետագա վերահսկողություն ավանդների գծով կենսագործվում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների հաշվապահությունները: Հետագա վերահսկողություն չպատակների համար օրգերները հաշվապահությունում պահվում են համաքված՝ ըստ առանձին ավանդատուների հաշիվների: Ավանդի հերթական օրգերն ստանալու ժամանակ, այդ օրգերի վրա յեղած ստորագրությունները համեմատվում են առաջին օրգերի ստորագրության նմուշի հետ: Բացի դրանից, ստուգվում են ավանդի մնացորդը հաշվելու ճշտությունը գործառնությունից հետո, տուկոսները հաշվելու ճշտությունը և այլն:

Հետագա վերահսկողությունը վարող կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները բացառիկ դեպքերում դրամ են տալիս յեղակա դրամարկղների խնայողա-

կան գրքերից, ստուգելով խնայողական գրքերից նշանակված ավանդի մնացորդը և ավանդատուի ստորագրությունը՝ հետագա վերահսկողության տվյալների հիման վրա:

Մի քանի առանձնահատկություններով է տարբերվում ներկայական ավանդների գործառնությունները ձևակերպելու տեխնիկան: Ոնայողական գրքերի հետ միասին ավանդատուներին տրվում է առանձին հսկիչ թերթիկ, վորի վրա տպված են հաղարավոր, հարյուրավոր, տասնավոր և միավոր ռուբլիների թվանշանները: Այդ թվանշանների մի մասը կտրվում է այնպես, վոր թերթիկին կից մնացած թվանշանները կաղմում են ավանդի մնացորդի գումարը: Ներկայական ավանդի յուրաքանչյուր գործառնություն կատարելիս՝ հսկիչ թերթիկը փոխարինվում է նորով: Հին հսկիչ թերթիկը մնում է խնայողական դրամարկղում և հաստատում է կատարված գործառնության ճշտությունը:

Յեթե ավանդատուն կորցնում է անվանական ավանդի խնայողական գրքերից կամ յեթե այդ գրքերից գողացվում է նրանից, ապա նա պետք է այդ մասին դրամով դիմում տա համապատասխան խնայողական դրամարկղին: Այդ դրամարկղը, հետագա վերահսկողությունից յուրաքանչյուր ստուգելուց հետո, գուրս է գրում ավանդատուի համար նոր խնայողական գրքերի կորցրածի փոխարեն (մեկ ռուբլի վճարով): Իսկ ներկայական ավանդի խնայողական գրքերից կամ հսկիչ թերթիկը, կամ թե այդ յերկու փաստաթղթերը կորցնելու դեպքում՝ ավանդատուն կարող է իր ավանդն ստանալ միայն դատական մարմնի վճռով: Նույնպես միայն դատարանի վճռով խնայողական դրամարկղը կարող է կասեցնել ներկայական ավանդի հանձնումը՝ խնայողական գրքերից կորցնելու դեպքում: Ներկայական խնայողա-

կան գրքերից և նրանց հսկիչ թերթիկները կորցնելու մասին՝ վոչ մի դիմում խնայողական դրամարկղները չեն ընդունում ավանդատուներից:

Ներկայական ավանդների հաշիվները պահվում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների գործառնության մասերում առանձին քարտակալներում, վորոնք փակվում և կնքվում են խնայողական դրամարկղի վարիչի կամ այն անձի կողմից, վորը նշանակված է այդ գործի համար հատուկ հրամանով: Միայն այդ անձնավորություններն իրավունք ունեն և ձևակերպելու ներկայական ավանդների գործառնությունները:

Նույն կարգով են պահվում առանձին քաղաքացիների այն հաշիվները, վորոնց ավանդների մնացորդները 5 ռուբլուց բարձր են և սկսած 1933 թ. հունվարի 1-ից վոչ մի գործառնություն չեն ունեցել: Նման հաշիվները 1934 թվականին ստորին խնայողական դրամարկղներից հանձնվել են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներին ի պահ և կոչվում են անչարժ հաշիվներ:

Անչարժ ավանդների հաշիվները (անկախ նրանից, թե ստորին խնայողական դրամարկղներից են հանձնվել, թե նրանք առաջնորդում են պահվում էյին կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասում, տեղավորվում են առանձին քարտակալում: Նման հաշիվների գործառնություններ կարող են կատարել միայն խնայողական դրամարկղի վարիչը կամ այն աշխատողը, վորին հրամանով հանձնված է այդ գործը:

Սակայն, անչարժ ավանդը կարող է տրվել ավանդատուին և այն ստանալ ինչպես խնայողական դրամարկղում, ուր

նա փոխադրվում է ավանդատուի դիմումի հիման վրա: Վոչ մի կոմիտիոն վարձատրություն այդ բաժնի համար չի դանձվում ավանդատուից:

Փոքր ինչ այլ կարգ է սահմանված մանր—5 ռուբլուց ցածր ավանդների (և կազմակերպությունների 25 ռուբլուց ցածր ավանդների) հաշվառման համար: Նման ավանդների համար տարվում են միացյալ հաշիվներ՝ կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների գործառնությունների մասերում: Այն ավանդատուների ցուցակները, վորոնց ավանդը հաշվեգրված է միացյալ հաշվում, կամ ինչպես կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնությունից մասում, այնպես ել այն ստորին խնայողական դրամարկղներում, վորը տվել է խնայողական գրքերից: Յերկու տեղերում ել ավանդատուն կարող է իր ավանդն ստանալ տուկոսների հետ միասին, վորը հաշվվում է վճարելիս՝ բոլոր անցած ժամանակի համար:

Անհրաժեշտ է ընդդեմ, վոր ներկայումս արգելված է խնայողական դրամարկղներին փոխանցելու կենտրոնական և շրջանային դրամարկղները վորեն ավանդներ առանց ավանդատուների հանձնարարության: Այդ պիսով՝ նույնիսկ 1933 թվականի հունվարի 1-ից անչարժության մեջ գտնվող ավանդները և 5 ռուբլուց ցածր մանր ավանդները (կազմակերպությունների ավանդները 25 ռուբլուց ցածր), յեթե նրանք առաջներում ինչ-ինչ պատճառներով չեն փոխանցվել կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասը, պետք է մրնան ի պահ ստորին խնայողական դրամարկղում:

11. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՆԿԱՆԻԿ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐ

Ավանդատուներն ունեն ցանկացած հիմարկությունը կամ ձեռնարկու-

թյանը վճարումներ կատարելու հնարավորություն, խնայողական դրա-

մարեղներին առանձին հրամաններ տալու միջոցով: Այդպիսի հրամանով խնայողական գրամակրդն ավանդաբանի հաշվից դուրս ե գրում վճարման դումարը և փոխանցում է այն ստացողի հաշվին: Այդ գործառնությունները կոչվում են ժիրո գործառնություններ, իսկ ավանդատուների հրամաններն իրենց հաշիվներին վորոչ դումարներ դուրս գրելու մասին՝ կոչվում են ժիրո հրամաններ: Ժիրո գործառնությունները հանդիսանում են անկանխիկ հաշվարկումների ձևերից մեկը, այսինքն՝ գործառնություններ, վորոնք կատարվում են առանց կանխիկ գրամ մուծելու և ստանալու: Անկանխիկ հաշվարկումների գործառնությունների թվին են պատկանում նաև ընթացիկ հաշիվներին հաշվարկային չեկերի հետ յեղող գործառնությունները, վորոնց մասին ասվել է վերևում: Ավանդատուն ժիրո հրամանը կարող է ուղարկել խնայողական գրամարկդին և փոստով:

Վճարումները ժիրոգործառնությունների միջոցով մուծելու հնարավորությունը խնայողական գրամարկդի հստակ աշխատանքի հետ միասին զգալի հարմարություններ է ներկայացնում նրա հաճախորդների համար և նպաստում է ավանդների աճմանը:

Անկանխիկ հաշվարկումները (ժիրոգործառնությունները) կատարվում են խնայողական գրամարկդների կողմից խոշոր քաղաքներում (նման քաղաքների ցուցակը հաստատում են միութենական հանրապետությունների խնայողամարկդների վարչությունները):

Վճարումների հիմնական տեսակը, վորով և զարգանում են անկանխիկ հաշվարկումները, հանդիսանում են բնակչության վճարումները կոմունալ ծառայությունների համար (բնակարանի, երեկոթոնների գիւյնի, ջրի, հեռախոսի, դպրի): Բացի կոմունալ ծառայությունների վճարում-

ներից, ժիրոգործառնություններ կարող են կատարվել և վճարումների մյուս տեղակների համար: Ընդամենը, սակայն, փոխանցելով վորեւ գումար առանձին քաղաքացու հաշվին, ավանդատուն անպայման պետք է միաժամանակ ներկայացնի գրամարկդին իր խնայողական գրքույկը: Խնայողական գրամարկդներում կիրառվող ժիրոհրամանները բաժանվում են յերեք հիմնական տեսակի՝ ստանդարտ, ունիվերսալ և յերկարատև:

Ստանդարտ հրամանների տակ հասկացվում են ծանուցագրեր—հաշիվները, վորոնք պատրաստվում են վճարումներն ստացողների կողմից (անայն վարչությունների, երեկոթոնների և այլն): Վորոչ ձև ունեցող ծանուցագրեր—հաշիվ վրա ավանդատուն կարող է հրաման լրացնել խնայողական գրամարկդում յեղած իր հաշվից վճարման դումարը դուրս գրելու համար, կամ թե այդ դումարը կանխիկով մուծել ստացողի գրամարկդը կամ բանկը: Այն վճարումները, վորոնց համար ավանդատուն ստացողներից նախապես չի ստանում ծանուցագիր—հաշիվներ (որինակ՝ վճար՝ հեռախոսի համար մի շարք քաղաքներում և այլն), կարելի չէ փոխանցել անկանխիկ հաշվարկումների միջոցով, լրացնելով ունիվերսալ ժիրոհրամանի բլանկ: Իսկ յեթե ավանդատուն հանձնարարություն է ուղում տալ խնայողական գրամարկդին սխտամատիկ կերպով վորեւ վճարումներ կատարելու համար (որինակ՝ ամեն ամիս), ապա գրա համար նա պետք է ուղտվի յերկարատև ժիրոհրամանի բլանկով: Ստանդարտ և ունիվերսալ ժիրոհրամանները բաղկացած են մի քանի մասերից: Գումարը հաշվից դուրս գրելուց հետո, հրամանի մի մասը վերադարձվում է ավանդատուն յին վորպես անգործագիր, մյուս մասն ուղտագործվում է որագրերի փոխարեն՝ հետագա հսկողություն

համար, և, վերջապես, յերրորդ մասն ուղարկվում է վճարումն ստացողին՝ վորպես ծանուցագիր՝ նրա հաշվում վճարը հաշվեգրելու մասին:

Ժիրոգործառնությունների համար խնայողական գրամարկդները պահում են առանձին ձևի գործառնությունների որագրեր:

Կատարելով անկանխիկ հաշվարկումներ կոմունալ ծառայությունների վճարումների համար, խնայողական գրամարկդները սահմանված չափով տույժ են բարդում վճարումներն ուղացնելու դեպքում: Վճարումը մուծելու որը (ժիրոհրամանը խնայողական գրամարկդին փոստով ուղարկելու դեպքում) համարվում է փոստի շտամպի վրա նշված ժամանակը: Տույժ հաշվելու

համար խնայողական գրամարկդներն ունեն առանձին աղյուսակներ:

Յեթե վճարումն ստացողի հաշվը գտնվում է նույն խնայողական գրամարկդում, վորտեղ տարվում է ավանդատույի հաշիվը, ապա այդ գրամարկդն ինքուրույն կերպով փոխանցում է ժիրոհրամանի մեջ նշված դումարը: Իսկ յեթե ստացողի հաշիվը գտնվում է մի ուրիշ խնայողական գրամարկդում կամ բանկում, ապա վճարումը փոխանցվում է կենտրոնական կամ շրջանային խնայողական գրամարկդի հաշվապաս. հույժյան միջոցով:

Անկանխիկ հաշվարկումներ կատարելու համար խնայողական գրամարկդները վոչ մի վճար չեն գանձում իրենց ավանդատուներից:

12. ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ

Փոխադրական գործառնությունը նախորդված է ավանդատուներին լավագույն կերպով սպասարկելու համար: Նա հնարավորություն է տալիս նրանց՝ ավանդ մի տեղից մյուսը փոխանցելու: Հենց գրա համար ել փոխադրումն ուղարկողը կամ նրա ստացողը պետք է ավանդատու լինի: Ավանդը մի խնայողական գրամարկդից կարող է փոխադրվել մյուսը՝ ամբողջությամբ կամ մաս-մաս, ինչպես հետագա պահպանման համար, այնպես ել կանխիկ գրամով տալու համար: Կարելի չէ և կանխիկ գրամ մուծել փոխադրելու և հաշվեգրելու ուրիշ խնայողական գրամարկդի ավանդատույի հաշվում: Սակայն վոչ մի խնայողական գրամարկդը փոխադրման համար կանխիկ չի ընդունում այդ դումարը նույնպես կանխիկ գրամով ուրիշ խնայողական գրամարկդում փոխադրումն ստացողին տալու համար: Նման փոխադրումները պետք է կատարվեն կապի հիմնարկությունների միջոցով:

Ուղտվել խնայողական գրամարկդի միջոցով կատարվող փոխադրումն-

րով կարող են ինչպես առանձին քաղաքացիները, այնպես ել կազմակերպությունները: Անհրաժեշտ է ընդգծել, վոր խնայողական գրամարկդները գրամ չեն փեխադրում այդպիսիք ներկայիչների հաշվում հաշվեգրելու համար: Փոխադրել ներկայացական ավանդը, կարելի չէ միայն մի վորեւ անձի անունով:

Դրամը փոխադրելու համար խնայողական գրամարկդները պատվիրած նամակով ուղարկում են առանձին բլանկներ— «փոխադրումներ»*):

Նայած նրան, թե գրամը փոխադրվում է մեր շրջանի ներսում, թե մի ուրիշ շրջան, փոխադրումները կրում են ներշրջանային կամ միջշրջանային անունները: Նրանց համար կիրառվում են բլանկների

* Մի քանի, առանձնապես հեռավոր հյուսիսային շրջանների շրջանային խնայողական գրամարկդներն իրավունք ե վերադաճված, փոխադրումներն ուղարկողների ցանկությամբ, առձեռն տալ նրանց ալը փոխադրումների լրացրած բլանկները՝ կնքամով կնքված ծրարներում:

դանադան ձևեր: Միջըջանային փոխադրումների կատարման ճշտությունը (քվիտովկա) տանում է խնայողական դրամարկդները և պետական վարկի այն վարչությունը, վորին յենթարկվում է փոխադրումը ուղարկած դրամարկդը: Ներըջանային փոխադրումների քվիտովկան կենսագործում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկդները: Այդ կապակցությամբ նման փոխադրումների բլանկի ձևն ալեկի հասարակ է:

Միջըջանային փոխադրության յուրաքանչյուր բլանկ կարող է ողտագործվել նրանում յերեք հազար ութուց վոչ բարձր գումար գրանցելու համար: Յեթե հարկավոր է մեծ գումար փոխադրել, ապա լրացվում է փոխադրությունների մի քանի փոխադրական բլանկներ: Ներըջանային փոխադրության բլանկը կարող է ողտագործվել ցանկացած գումարի փոխադրության համար:

Ավանդը փոխադրելու մասին յեղած դիմումին ավանդատուն պետք է կցի իր խնայողական գրքուկը:

Նման դիմում տալ կարելի յե այն դրամարկդին, վորտեղ պահվում է ավանդը կամ ուր փոխադրվում է այդպիսին:

Վերջին դեպքում, դիմումն ու խնայողական գրքուկն ստացած խնայողական գրքուկն ստացած խնայողական գրամարկդն ուղարկում է այդպիսիք այն խնայողական դրամարկդին, վորտեղ պահվում է ավանդը: Ներկայական ավանդը փոխադրելու մասին դիմում տալ կարելի յե միայն այն դրամարկդին, վորը տվել է խնայողական գրքուկը:

Խնայողական գրքուկին ու փոխադրության մասին դիմումն ընդունելու համար անդորրագիր է տրվում ավանդատուին: Անդորրագիր տրվում է նաև փոխադրության համար կանխիկ դրամ ընդունելիս: Այս դեպքերում, և ավանդատուն լրացուցիչ

մուծում է փոխադրում վորպես ավանդ և ներկայացնում է այդ ավանդի խնայողական գրքուկը, մուծումը գրանցելու համար անդորրագիր չի տրվում:

Շրջանի ներսում յեղած փոխադրությունն ստորին խնայողական գրամարկդը ձևակերպում է ինքը, լրացնելով փոխադրական բլանկը: Այլ է դրությունը միջըջանային փոխադրությունների ժամանակ: Փոխադրության մասին յեղած դիմումն ու խնայողական գրքուկին անմիջապես, չսպասելով որպա հաշվետվությանը ուղարկվում են կենտրոնական կամ շրջանային խնայողական գրամարկդի հաշվապահությանը՝ փոխադրությունը կադմելու համար: Այդպիսով՝ միջըջանային փոխադրությունների բլանկներն ստորին խնայողական գրամարկդներում չեն պահվում և չեն լրացվում: Միջըջանային փոխադրություններն ուղարկվում են ստորին խնայողական գրամարկդները նույնպես վոչ անմիջապանորեն, այլ այն կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկդները, վորոնց յենթարկվում են վերջինները:

Յուրաքանչյուր փոխադրության համար (ինչպես միջըջանային, նույնպես և ներըջանային) փոխադրությունն ուղարկողից գանձվում է վորոչ գումար, վորը միատեսակ է առանձին քաղաքացիների և կադմակերպությունների համար: Մինչև 25 ու. փոխադրության համար գանձվում է 30 կոպեկ, 25-ից բարձր մինչև 50 ու. — 50 կոպեկ և 50 ուրբուց բարձր մինչև 100 ու. — 1 ուրբի: 100 ու. բարձր գումարներով փոխադրումների ժամանակ՝ յուրաքանչյուր ուրբիում համար (թեև վոչ լրիվ) գանձվում է 1 կոպեկ: Այդպիսով՝ 223 ուրբի 30 կոպեկ գումարի փոխադրության համար՝ փոխադրությունն ուղարկողը պետք է վճարի 2 ուրբի 24 կոպեկ: Միևնույն քաղաքի (յեթե նույնիսկ այդ քաղաքը բաժանված է շրջանների) խնայողական դրամարկդները միջև կատարվող փոխադրումները, համար վոչ վճար և ներկայացնում է այդ ավանդատուն ուրիշ գանձվում:

մարկդները միջև կատարվող փոխադրությունների համար վոչ մի վճար չի գանձվում:

Փոխադրումները փոստով պատվիրված նամակով ուղարկելը կատարվում է խնայողական գրամարկդների հաշվին:

Այն լրացուցիչ մուծումները, վորպիսիք անում է ավանդատուն ուրիշ խնայողական գրամարկդում յեղած իր հաշվառում հաշվեգրելու համար՝ փոխադրվում են անվճար: Նման կարգը սահմանված է, սակայն միայն այն դեպքերի համար, յերբ ավանդատուն ներկայացնում է այդ հաշվի խնայողական գրքուկը՝ լրացուցիչ մուծումը գրանցելու համար:

Հեռադրով փոխադրում խնայողական գրամարկդները չեն կատարում: Նրանք չեն ընդունում նաև հանձնարարություններ՝ դրամը ստորական փոստային և հեռադրական փոխադրումներով ուղարկելու համար (այսինքն կապի հիմնարկությունների միջոցով):

Ուրիշ խնայողական գրամարկդում հետադարձ պահելու համար փոխադրվող ավանդի վրա բարդվում են տոկոսներ փոխադրությունը ճանապարհին գտնվելու ամբողջ ժամանակի համար:

Յեթե կանխիկ վճարելու համար փոխադրված դրամը չի ստացվի յերեք ամսով ընթացքում, ապա այդ դրամը հետ է վերադարձվում այն խնայողական գրամարկդին, վորը սկզբից ուղարկել է գումարը:

13. ԱԿԿՐԵԴԻՏԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակկրեդիտիվային գործառնություն հիմնական նպատակն է՝ հարմար միջոց ստեղծել բնակչության համար ճանապարհին դրամական միջոցներից ոգտվելու համար: Ակկրեդիտիվի համար դրամ մուծողը կարող է այդ դրամն ստանալ ԽՍՀՄ-ի ցանկացած քաղաքի և շրջանի խնայողական

փոխադրություն: Սակայն այդ անհար և այն դեպքերում, յերբ դրամը, փոխադրողի ցուցմունքով, արդեն հաշվեգրվել է մի վորևե ուրիշ անձի հաշվում:

Խնայողական գրամարկդների աշխատողները պարտավոր են հետևել այն բանին, վորպեսզի յուրաքանչյուր փոխադրություն կատարվի ժամանակին: Ուրիշ խնայողական գրամարկդում պահվող ավանդը փոխադրվելու մասին դիմում ընդունելով և ուղարկելով նրան այդ դիմումը, պետք է գրանցել այն առանձին ունեւորում և հետևել փոխադրությունը ժամանակին ստացվելուն: Յեթե կենտրոնական կամ շրջանային խնայողական գրամարկդը ուշացնում է փոխադրության ձևակերպումը, — այդ մասին պետք է ահազանդել այն վարչությանը, վորին յենթարկվում է նա:

Այն դեպքերում, յերբ ուղարկված միջըջանային փոխադրությունը չի հասնում ըստ պատկանելույն (կորչում է ճանապարհին, կամ սխալ հասցեագրվում, ուղարկվում է փոխադրության կրկնակը: Կենտրոնական կամ շրջանային խնայողական գրամարկդները (ինչպես փոխադրությունն ուղարկողը այնպես ևլ ստացողը) պարտավոր են հետևելու այն բանին, վորպեսզի միևնույն գումարը յերկու անգամ չվճարվի, թե փոխադրության իսկականով և թե կրկնակով:

կան գրամարկդներում: Ակկրեդիտիվները տարվում են միայն առանձին քաղաքացիների անունով: Կադմակերպությունների անունով և ներկայական ակկրեդիտիվներ չեն տրվում:

Ակկրեդիտիվներ տալիս են բոլոր կենտրոնական և շրջանային, ինչպես

և բոլոր առաջին կարգի խնայողա-
կան գործարկները: Յուրաքան-
չյուր խնայողական գործարկը մի
անձի անուանով կարող է տալ ցան-
կացած քանակի ակկրեդիտիվներ:
Այն ամենամեծ գումարը, վորի հա-
մար կարող է տրվել յուրաքանչյուր
ակկրեդիտիվը, սահմանված է 1000
ուրբի: 50 սուրբուց պակաս գումար-
ով ակկրեդիտիվ չի տրվում:

Ակկրեդիտիվները վճարվում են
բոլոր խնայողական գործարկները,
բացի դրածակալութունները: Յու-
րաքանչյուր ակկրեդիտիվ վճարվում
է միայն այն լրիվ գումարով, վորի
համար նա տրվել է:

Ակկրեդիտիվն ուժի մեջ է 4 ա-
միս: Այդ ժամկետն անցնելուց հե-
տո, ակկրեդիտիվը կարող է վճար-
վել խնայողական գործարկի կող-
մից միայն այն վարչության թույլ-
տվությամբ, վորին յենթակվում
է ակկրեդիտիվ տված խնայողական
գործարկը: Սակայն ակկրեդիտիվը
տալու որից 3 տարի է 4 ամիս անց-
նելուց հետո, նրա տեղը միանգա-
մայն կորցնում է ակկրեդիտիվով
գրամ ստանալու իրավունքը:

Յուրաքանչյուր ստացվող ակկրե-
դիտիվի համար հաճախորդը վճա-
րում է 20 կոպեկ: Ակկրեդիտիվների
համար տոկոսներ չեն տրվում:

Ակկրեդիտիվի տիրոջն առանձին
տրվում է յերկու փաստաթուղթ—
ակկրեդիտիվը և նրա հսկիչ թեր-
թիկը: Այդ ըզիտում է նրանից, վոր
հաճախորդի ձեռքին գտնվող փա-
ստաթղթերից մեկը կարող է կորչել
կամ գողացվել: Ունեցողի կողմից
այդ փաստաթղթերից վորեւէ մեկը—
ակկրեդիտիվը կամ հսկիչ թերթիկը
կորցնելու դեպքում (խորհուրդ է
տրվում նրանցից յուրաքանչյուրը
պահել առանձին)—չարագործի կող-
մից ակկրեդիտիվով գրամն ստանա-
լը զգալիորեն դժվարանում է:

Ակկրեդիտիվը և նրա հսկիչ թեր-
թիկը, նաև կտրոնը, վորը նշանակ-
ված է ակկրեդիտիվային գործառ-

նությունները քվիտովկայի համար,
և ակկրեդիտիվի արժանույթ, վորը
մնում է խնայողական գործարկից
—տալված են մեկ թերթի վրա: Այդ-
պիսով՝ ակկրեդիտիվի բանկը բաղ-
կացած է չորս մասից: Արժատի և
ակկրեդիտիվի, նաև ակկրեդիտիվի
և կտրոնի միջև տալված են այսպես
կոչված «հսկիչ թվանշանները», նը-
րանք կտրվելով բաժանվում են յեր-
կու մասի աշխատ, վոր ակկրեդի-
տիվի ինչպես ձախ, աշխատ էլ աջ
կողմից տալված թվանշանները կադ-
մում են մուծված գումարը:

Ակկրեդիտիվի բանկի վրա մի
ուղղում չի թույլատրվում: Լրա-
ցնելով բանկը, խնայողական գրա-
մարկի վերահսկիչը պետք է
ամսվա անունը գրել բանկում, խի
ակկրեդիտիվի գումար—բանկում և
թվանշաններով: Հաճախորդի անվան
և հայրանվան կրճատում չի թույ-
լատրվում: Առանձին ուշադրություն
պետք է դարձնել այն բանին, վոր-
պետքի ակկրեդիտիվի վրայի «հսկիչ
թվանշանները» կտրվեն ճիշտ: Յու-
րաքանչյուր աշխատող պետք է հի-
շի, վոր ակկրեդիտիվը ձեռակերպե-
լու ժամանակ թույլ տված ամենա-
փոքր սխալը, դժվարություններ և
ստեղծում հաճախորդի համար դրա-
մըն ստանալու ժամանակ և կարող է
միայն բերել խնայողական գործար-
կիցներին:

Դրամն ստանալու ժամանակ հա-
ճախորդը պարտավոր է վերահսկիչի
ներկայությամբ ստորագրել ակկրե-
դիտիվն ու հսկիչ թերթիկը: Այդ
ստորագրությունները վերահսկիչը
համեմատում է ակկրեդիտիվի վրա
յեղած ստորագրության նմուշի հետ:
Բացի այդ, հաճախորդը ներկայաց-
նում է անձնագիրը: Այդ անհրաժեշտ
է նրա համար, վորպետքի կանխել
ակկրեդիտիվի վճարումը նրա կորց-
րած ժամանակ: Անձնագրի համարն
ու սերիան, ում կողմից յերբ և
վորտեղ է տրվել այդ անձնագիրը վե-
րահսկիչը պարտավոր է նշանակել

վճարվող ակկրեդիտիվի հակադիր
յերեսին:

Անդրադեաներն իրենց անձնագիրը
ներկայացնում են միջ միայն ստա-
նայու, այլ ակկրեդիտիվի համար
գրամ մուծելու ժամանակ ընդվորում
անձնագրի սերիան և համարը, նրա
տված տեղը և ժամանակը, անձնա-
գիրը տված հիմնարկի անունը
գրանցվում են ակկրեդիտիվի առաջին
յերեսին՝ այդ ակկրեդիտիվը տալու
ժամանակ: Այդ դեպքում, ակկրեդի-
տիվի վրա ստորագրության նմուշի
համար առանձնացված տեղում, նը-
վում է «անդրադետ»:

Ակկրեդիտիվը կարող է վճարվել
միջ միայն իրեն՝ ակկրեդիտիվի տը-
րոջը, այլ նրա հավատարմագրով և
ուրիշ անձնավորության: Ակկրեդի-
տիվի տիրոջ ստորագրությունը հա-
վատարմագրի վրա՝ պետք է վաղե-
րացված լինի նոտարական մարմնի
կողմից: Վճարված ակկրեդիտիվն
ու նրա հսկիչ թերթիկը խնայողա-
կան գործարկի դանձապահը մա-
րում է, կտրելով «ակկրեդիտիվ»
և «հսկիչ թերթիկ» բառերից տառե-
րի մի մասը:

Ակկրեդիտիվը տալու ժամանակ
նրանցից կտրված կտրոնը և հենց ինքն
ակկրեդիտիվը նրա վճարելուց հետո
ուղարկվում են քվիտովկայի համար
խնայողական գործարկի այն վարչու-
թյանը, վորին անմիջականորեն յեն-
թարկվում է ակկրեդիտիվը տրված
գրամարկը: Միայն այդ վարչու-
թյան թույլտվությամբ՝ կենտրոնա-
կան կամ չըջանային խնայողական
գործարկը կարող է դրամ վճարել
հաճախորդի կողմից ակկրեդիտիվը
կամ նրա հսկիչ թերթիկը կամ հենց
այդ յերկու փաստաթղթերն էլ
միասին կորցնելու դեպքում: Ակկրե-
դիտիվի և հսկիչ թերթիկի կամ
այդ փաստաթղթերից վորեւէ մեկի
կորցնելու մասին դիմումն ընդու-
նում է յուրաքանչյուր կենտրոնա-
կան կամ չըջանային խնայողական
գործարկը: Նա պարտավոր է այդ

դիմումն անմիջական ուղարկել այն
հաճախատության, յերկրի կամ
մարդի խնայողական գործարկից
վարչության, վորտեղ գտնվում է
ակկրեդիտիվը տված խնայողական
գործարկը:

Յեթե հաճախորդը, կորցնելով ակ-
կրեդիտիվը, պահպանել և հսկիչ
թերթիկը չապա նա պետք է այդ կցի
իր դիմումին, այդ թերթիկի վրա
լայնությամբ մակարդրելով՝ «ակկրե-
դիտիվը կտրել է այս—ինչ թվին, ամ-
սին, տարին» և ստորագրել այդ մա-
կարդությունը: Կենտրոնական կամ
չըջանային խնայողական գործարկից
ընդունելով դիմումն ակկրեդիտիվը
կորցնելու մասին (և հսկիչ թերթի-
կը, յեթե նա պահպանվել է), ան-
դորադիր է տալիս այդ դիմումն
ընդունելու համար:

Այն դեպքերում, յերբ հաճախորդը՝
կորցրել և ակկրեդիտիվը, բայց
պահպանել և հսկիչ թերթիկը, շատ
նպատակահարմար է կորուստի մա-
սին հեռադրով հայտնել այն վար-
չությանը, վորը քվիտովկա յե կա-
տարում վորպետքի ակկրեդիտիվը
գտնող կամ գողացող անձնավորու-
թյունը չկարողանա նրանով գրամ
ստանալ, ստացնելու հայտնած լի-
նելով ակկրեդիտիվի տիրոջը հսկիչ
թերթիկը «կորցնելու» մասին: Ակ-
կրեդիտիվը կորցնելու մասին վար-
չությանը հեռագրի ուղարկել խնա-
յողական գործարկը կարող է այն
պայմանով, յեթե հաճախորդը միջա-
րի նրան այդ հեռագրին ուղարկելու
արժեքը:

Յերկու փաստաթղթերն էլ կամ
միայն ակկրեդիտիվը կորցնելու դեպ-
քում դրամ տալու թույլտվությունը
խնայողական գործարկիցներն վար-
չությանը տալիս է այն տալու որից
6 ամիս անցնելուց հետո: Ընդամենը
ակկրեդիտիվի գումարով փոխադ-
րումն ուղարկում է այն կենտրոնա-
կան կամ չըջանային խնայողական
գործարկին, վորին մատնանել է
հաճախորդը:

Վեցամյա ժամկետը սահմանված է նրա համար, վորպեսզի դրամ վճարելու համար թույլտվություն տալիս՝ Վարչությունն իմանա թե ակիրկրեկտիվն արդեն վճարված չի՞ լինել արդյոք:

Ավելի հասարակ կարգ է կիրառվում միայն հսկիչ թերթիկը հաճախորդի կողմից կորցնելու դեպքում: Դրամի վճարումն այդ դեպքում կատարում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը:

14. ԿՈՄԻՍԻՈՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կոմիսիոն» անունը կրում են դրամի և արժեքների հետ կապարվող այն գանապան դործառնությունները, վարպետի կատարում են խնայողական դրամարկղները մյուս կադմակերպությունների հանձնարարությամբ:

Նման գործառնությունների թիվը մինչև 1934 թվականի կեսերը անդհա-հատ աճում էր: Մի քանի գործառնություններ ծնունդ էլին առնում տեղում, մյուսները մտցվում էլին կենտրոնացված պայմանագրերի հիման վրա: Այնպիսիք է փոխառության աշխատանքների հետ կապ չունեցող բազմաթիվ գանապան գործառնություններ վաթարացնում էր ավանդատուների և պետական փոխառությունների պարտատոմս պահողների սպասարկումը: Նման գործառնություններ կատարումը թեև խնայողական դրամարկղներին յեկամուտ էր տալիս, բայց հեռացնում էր նրանց բնակչության միջոցները ներգրավելու խնդիրներին:

Սկսած 1934 թվականի յերկրորդ կեսից, խնայողական դրամարկղների կողմից գաղարեցվեց մի շարք կոմիսիոն գործառնությունների կատարումը՝ ոտարյերկրյա վալյուտայի և չին ձևի դրամների ձեռք բերելը (այդ աշխատանքները կենտրոնացված էլին Պետական Բանկում),

խնայողամարկղների այն վարչության թույլտվությամբ, վորը կատարում է տվյալ ակիրկրեկտիվի քվիտովկան: Նման թույլտվությունը վարչությունը տալիս է ստուգելով, թե իսկապես տրված է յեղել արդյոք այդ ակիրկրեկտիվը և նրա կողմնելու մասին դիմում չի՞ ստացվել արդյոք: Յեթե թույլտվությունն ուղարկվում է հեռագրով, ապա վարչության պետի ստորագրությամբ նրա պետք է հաստատված լինի հեռագրատան կողմից:

«Նյու-Յորկ» ապահովագրական բնակրություն յորդանների բնդունումը, տնային աշխատողների սոցալի մուծումները վճարելու մարկաների վաճառքը, կոմունալ ծառայությունների համար կանխիկ դրամով վճարումներ բնդունելը (բնակվարձ, երկտրական լույսի վարձ, հեռախառ և այլն):

Ներկայումս խնայողական դրամարկղներին արգելված է կոմիսիոն գործառնություններ կատարելու համար վորեւս պայմանագրեր կնքելը տեղերում:

Այժմ, խնայողական դրամարկղները կատարում են մի քանի տեսակ կոմիսիոն գործառնություններ: Նրանք դրամ են վճարում ԽՍՀՄ-ի շքանշաններով և միութենական հանրապետությունների շքանշաններով պարգևատրվածներին: Այդ գործառնությունը կատարում են բոլոր կենտրոնական և շրջանային, նաև առաջին կարգի խնայողական դրամարկղները: Դրամը տրվում է ընթացիկ և անցած ամիսների համար դրամային կտրոնների գրքուկներին հիման վրա, միաժամանակ ներկայացնելով շքանշանային գրքուկները:

Շքանշաններով դրամ է տալիս այն խնայողական դրամարկղը, վորտեղ հաշվի յե առնված շքանշանա-

կիրը (այսինքն վորին նա «ամբարել» է) յի փաստաթղթերը): Այդ դրամարկղում տարվում է շքանշանով պարգևատրվածի անձնական հաշվի քարտը: Դրա համար սպասարկվում է այնպիսի համար կիրառվող անձնական հաշվի քարտի բանկ:

Պարգևատրվածին վճարվող գումարը նշված է յուրաքանչյուր կտրվող կտրոնի վրա: Դրամը տրվում է հերթական կտրոնի կտրվող մասի հակադիր յերեսին ստորագրությամբ առնելով: Պարգևատրվածն ուրիշ տեղ տեղափոխվելիս պետք է «հետ ամբարել» յի փաստաթղթերը մի խնայողական դրամարկղից և նրանց «ամբարել» նոր բնակություն տեղի մի խնայողամարկղին:

Բացի շքանշանակիրներին դրամ վճարելուց, խնայողական դրամարկղները վճարում են հանրապետական նշանակություն ունեցող անհատական և ակադեմիական թույակ: Այդ գործառնությունը կատարում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները, նաև առաջին կարգի խնայողական դրամարկղները: Թույակ վճարելու համար հիմք են ծառայում Սոցալ-ժողկոմատի կողմից յուրաքանչյուր թույակառույի համար կազմվող կենսաթույակային քարտերը: Կենսաթույակային քարտերը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղներին ուղարկում է Պետաշխնայողամարկղների և Պետվարկի Հանրապետական Վարչությունը: Թույակառույ խնայողական դրամարկղին ներկայացնում է յի կենսաթույակային գրքուկը, վորի հատվածական կտրոնը դրամն ստանալու մասին տրված ստորագրությամբ մնում է խնայողական դրամարկղում: Թույակը վճարվում է անցած ամսի համար: Յեթե թույակառույ, յերեք ամիս բնթացում չի ստանում թույակը, ապա խնայողական դրամարկղը գաղարեցնում է նրան թույակ վճարելը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր յուրաքանչյուր միութենական հանրապետության թույակառույներին թույակը վճարվում է յի առանձնահատկություններն ունեցող կարգով: Մասնավորապես, մի քանի հանրապետությունների անհատական թույակառույներին գանապան կարգով վճարվում է միանվագ նպաստ («Նպաստ՝ 13-րդ ամսվա համար»):

Խնայողական դրամարկղները կատարում են նաև կուսակցական և կոմյերիտական անդամավճարների գումարների բնդունումը: Այդ գումարները խնայողական դրամարկղները (բոլորը, բացի գործակալություններից) բնդունում են կուսակցական կոմիտեներին և ՀամԿՅՅՄ կոմիտեներին քարտուղարներին, կուսկազմակերպություններից և կոմյերիտ կազմակերպիչներից: Կուսակցություն առանձին անդամներից և կոմյերիտականներից անդամավճարներ խնայողական դրամարկղները չեն բնդունում:

Կուսակցական կամ կոմյերիտական անդամավճարների գումարները հանձնելով խնայողական դրամարկղին, կոմիտեյի քարտուղարը, կուսկազմակերպիչը կամ կոմյերիտկազմակերպիչը ներկայացնում են առանձին դիմում: Ընդունելով մուծումների գումարը, խնայողական դրամարկղը վերադարձնում է դիմումը վերահսկիչ և գանձապահի ստորագրությամբ (դրամն բնդունելու անդորրագրի փոխարեն): Դրամը մուծողն յի հերթին, յի հաստատումը մուծված գումարի, ստորագրում է խնայողական դրամարկղի կողմից կազմված օրդերը:

Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները առաջին կարգի խնայողական դրամարկղները վճարում են Պաշտ-Ավիաբիմի վիճակախաղային տոմսերով յեղած 375 օտբուլց վոչ բարձր դրամային շահումները: Յուրաքանչյուր վիճակախաղի համար խնայողական դրա-

մարկդին լարվում են հատուկ ցուցումներ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, վեր վիճակախաղի շահումները վճարվում են միայն պաշտոնական աղյուսակների հիման վրա: Ներկայացրած վիճակախաղային տոմսի իսկականությունն անհրաժեշտ է ստուգել ամենամանրադննին կերպով:

Բացի այդ կոմիտեն գործառնություններից, խնայողական դրամարկդները (բոլորը բացի գործակալություններից) գործառնություններ են կատարում Պետալի հանձնարարություններ: Նրանք լիազորված են ընդունում են կյանքի ապահովագրություն մուծումները և պետական ապահովագրության հավաքված մուծումները Պետալի տեսչությունից և գործակալներից:

Այդ բոլոր գումարները խնայողական դրամարկդներն ընդունում են այն վճարումների հայտարարությունների հիման վրա, վերադարձվող կազմում են ուժանդակող հանձնաժողովների լիազորները, Պետալի տեսչները և գործակալները: Դրամն ընդունելու համար խնայողական դրամարկդը հատուկ ձևի անդորրագիր և տալիս: Այդ անդորրագրի յերկրորդ որինակը (պատճենահան թղթով գուրա գրված) մնում է խնայողական դրամարկդում: Դրամ մուծողն ստորագրում է անդորրագիրը (անսպաժման նրա յերկու որինակները—պատճենահանման թղթով):

Մի շարք տարիների ընթացքում խնայողական դրամարկդներն աշխատում էին անբավարար: Դա խանգարում էր աշխատավորների խնա-

յողությունները կազմակերպելու գործին, արգելակում էր ավանդների ներհոսումը:

Անհետաձգելի խնդիրը — բնակչության սպասարկման դրվածքում հասնել վճարական բեկման— գրված և յուրաքանչյուր խնայողական դրամարկդի առաջ, նրա յուրաքանչյուր աշխատողի առաջ: Խնայողական դրամարկդները պետք է վերակառուցեն իրենց աշխատանքներն այն պահանջների համեմատ, վերադարձվող ներկայացնում են տասնյակ միլիոնավոր աշխատավորները, վերոնք դիմում են խնայողական դրամարկդներին ավանդ մուծելու կամ հետ պահանջելու համար, պետական փոխառություն պարտատոմսով չափում ստանալու համար և այլն:

Արդեն այժմ էլ քիչ չեն իրենց հաճախորդների որինակելիորեն սպասարկող խնայողական դրամարկդներ, քիչ չեն խնայողական դրամարկդների դերադանցորեն աշխատող աշխատակիցները: Այդ լավագույն աշխատողների փորձը պետք է դառնա ամբողջ սխառմի սեփականությունը:

Բարձրացնել առանց բացառություն բոլոր խնայողական դրամարկդների աշխատանքների փորակը, հասնել այն բանին, վերադարձի նրանց բոլոր աշխատակիցներն աշխատեն ախպես, ինչպես ներկայումս աշխատում են լավագույն գերադանցիկները, — ահա թե ինչը պետք է սպասվի բնակչության սպասարկման դրվածքի խիստ բարելավումը և աշխատավորների խնայողությունների ներհոսման ուժեղացումը: Այդ խնդիրը պետք է լուծվի սոցիալիստական մրցումը լայն ծավալելու միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Խորհրդային խնայողական դրամարկդների դերը	3
2. Խնայողական գործի զարգացումը ԽՍՀՄ-ում	6
3. Խնայողական դրամարկդների ավանդատուներն ու նրանց ավանդները	13
4. Խնայողական դրամարկդների սխառմի կազմակերպչական կառուցման հիմունքները	15
5. Ավանդների ներգրավման պլանավորումը	19
6. Ավանդների կամավորությունը—մասնաշխատանքային բացատրական աշխատանքների հիմքն է	21
7. Ավանդատուների սպասարկումը բարելավող աշխատանքների կազմակերպումը	23
8. Ավանդատուների իրավունքները, ավանդների տնորինելու կարգը, ավանդների տեսակները	26
9. Կազմակերպությունների ավանդները	33
10. Ավանդների գործառնությունների ձևակերպման տեխնիկայի և վերահսկողության հիմնական սկզբունքները	37
11. Բնակչության վնարումների անկանխիկ հաշվարկումներ	41
12. Փոխադրական գործառնություն	43
13. Ակկրեդիտիվային գործառնություն	45
14. Կոմիտեն գործառնություններ	48



Գլավլիտի լիազոր՝ Տ—1690 պատվ. 288 տիրած 1000

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺԿԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿ ԶՈՒԹՅՈՒՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՍՏ-
ՏԱՆ»-Ի ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0209106

